Ազգ
Azg
25 ՀՈՒՆՈՒԱՐ 2011 ԵՐԵՔՇԱԲԹԻ N 11(4630)
ISSN: 1829-1651

# Եվրոխորհրդարանը դատապարտեց քրիստոնյաների հալածանքները

Ստրասբուրգում՝ Եվրոխորհրդարանի նստաշրջանում ընդունվել է քրիստոնյաների հալածանքները դատապարտող բանաձեւ: «Եվրոմիությունն այլեւս աչք չի փակի ողջ աշխարհում քրիստոնյաների հալածանքների վրա», իր ելույթում հայտարարել է ԵՄ արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության գծով գերագույն ներկայացուցիչ **Քեթրին Էշթոնը**:

Փաստաթուղթը Եգիպտոսում, Նիգերիայում, Պակիստանում, Ֆիլիպիններում, Կիպրոսում, Իրանում եւ Իրաքում քրիստոնյաների հանդեպ վերջերս ձեռնարկված բռնարարքների արձագանքն է: Բանաձեւում ընդգծվում է, որ Եվրոպայում առկա են կրոնական ազատության խախտման եւ խտրականության օրինակներ: Այդ մասին հաղորդում է Ինտերֆաքսը, վկայակոչելով Մոսկվայի պատրիարքարանի արտաքին եկեղեցական կապերի բաժնի կայքը:

# Մինչեւ փետրվար հացի գինը կշարունակի բարձրանալ

*Կթանկանան հրուշակեղենն ու մակարոնը*

Ուրբաթ երեկոյան մայրաքաղաքի մի շարք խանութներում արդեն նկատվում էր ալյուրի գնի որոշակի բարձրացում: Մեծածախի գինը 1 կգ-ի դիմաց հասել է 222 դրամի, մանրածախը սկսվում է 240 դրամից:



Հանգստյան օրերին ալյուրի գնի բարձրացմանը զուգահեռ թանկացել է ոչ միայն հացը, այլեւ հրուշակեղենն ու մակարոնը: Մայրաքաղաքի բազմաթիվ խանութներում հացի գինը բարձրացել է 20-ից 50 դրամով: Մի շարք խանութներում մինչեւ 70 դրամ բարձրացել է մակարոնի գինը:

Եթե հաշվենք, որ հայերը հացակեր ազգ են, ապա հացի թանկացումը 20 դրամով ամսվա կտրվածքով հսկայական ծանրաբեռնվածություն է ընտանեկան բյուջեի վրա:

Սպառողների միության ասոցիացիայի նախագահի **Արմեն Պողոսյանի** ներկայացմամբ՝ հացի շուկայում ստեղծված իրավիճակն անվերահսկելիության եւ անպատժելիության հետեւանք է: «Շուկայում գործող տնտեսվարողներն էլ օգտվում են այդ իրավիճակից եւ գերշահույթ ստանալու համար դիմում են նման քայլերի»: *Տես էջ 3*

ԶՈՀԵՐ, ՎԻՐԱՎՈՐՆԵՐ, ԽՍՏԱՑՎԱԾ ՌԵԺԻՄ

# Ահաբեկչություն մոսկովյան «Դոմոդեդովո» օդանավակայանում

Երեկ երեկոյան Երեւանի ժամանակով ժամը 17:40 (16:40 մոսկովյանով), ըստ BBC-ի, Մոսկվայի «Դոմոդեդովո» օդանավակայանի միջազգային չվերթերի համար նախատեսված ուղեւորաբեռների ընդունման բաժնում տեղի է ունեցել 5 կգ տրոտիլի հզորություն ունեցող ռումբի պայթյուն: Ռուսական այլ աղբյուրներ, սակայն, նշում են, որ պայթյունը տեղի է ունեցել օդանավակայանի տարածքում գտնվող «Ասիա» ռեստորանի մերձակայքում. «Ռումբով զինված ահաբեկիչը եղել է սպասասրահում եւ պայթյունն իրականացրել է հատկապես այն վայրում, որտեղ մարդկային ավելի մեծ խմբեր են եղել»: Անմիջապես դեպքի վայր ժամանած ուժային կառույցների ներկայացուցիչները, որոնք, ըստ որոշ՝ «ոչ պաշտոնական տվյալների», վաղօրոք տեղեկացված են եղել ահաբեկչության մասին, պատահարը որակել են ահաբեկչություն՝ ՌԴ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածը՝ 20 տարի ազատազրկում ենթադրող պատժաչափով: Տեղի ժամանակով ժամը՝ 16:00-ից 16:50 «Դոմոդեդովոյում» վայրէջք են կատարել 8 միջազգային չվերթեր՝ Օդեսայից, Խուրգադայից, Բրյուսելից, Բուրգասից, Լոնդոնից, Բեռլինից, Կուբայից եւ Մայնի Ֆրանկֆուրտից: Երեւանից «Սիբիրյան ավիաուղիների» չվերթով ինքնաթիռը մեկնել է Երեւանի ժամանակով 17:30 (16:30 մոսկովյանով), փաստորեն տասը րոպե անց Մոսկվայում տեղի է ունեցել պայթյունը: Իսկ Մոսկվայից Երեւան «Արմավիա»-ի չվերթը տեղի ժամանակով իրացվել է 16:30-ին, այսինքն՝ կրկին տասը րոպե հետո տեղի է ունեցել պայթյունը: «Դոմոդեդովո» օդանավակայանի պաշտոնական կայքից տեղեկանում ենք, որ օդանավակայանը հետաձգել է Հայաստանից, Չինաստանից, Գերմանիայից, Թուրքիայից եւ Վիետնամից եկող չվերթերը: ՀՀ ԱԳՆ-ից հայտնում են, որ Մոսկվայում ՀՀ դեսպանատան տվյալներով առայժմ զոհվածների ու տուժողների մեջ հայեր չեն հայտնաբերվել: Վերջին տվյալներով, որոնք հրապարակել է ՌԴ առողջապահության նախարարությունը, զոհվել են 30-ից ավելի, վիրավորվել ավելի քան 130 քաղաքացիներ: Դեպքի վայր են մեկնել փրկարարներ, շտապօգնության 70-ից ավել մեքենաներ, օդանավակայանում բացվել է հոգեբանական օգնության կետրոն: Նախագահ Մեդվեդեւը, հրավիրելով հատուկ նիստ, հայտարարել է «հատուկ իրավիճակ» մոսկովյան բոլոր օդանավակայաններում: Այժմ «Վնուկովո» եւ «Շերեմետեւո» օդանավակայանները նույնպես աշխատում են խստացված ռեժիմով: Հ. Ա.



# Վերջը ԼՂՀ-ն էլ ողջունեց Սուդանի հանրաքվեն

Սուդանի ինքնորոշման հանրաքվեի առիթով երեկ հանդես է եկել ԼՂՀ ԱԳՆ-ն՝ ողջունելով Հարավային Սուդանում հանրաքվեի անցկացումը:

«Հարավային Սուդանի հանրաքվեի անցկացումը վկայում է որ ժողովուրդների ինքնորոշման անկապտելի իրավունքի ճանաչումն ու իրացումը նմանատիպ հակամարտությունների խաղաղ կարգավորման առավել օպտիմալ եւ ժողովրդավարական եղանակ է, այդ կերպ են լուծվել Եթովպիայի եւ Էրիթրեայի, Ինդոնեզիայի եւ Արեւելյան Թիմորի միջեւ հակամարտությունները», ասված է հայտարարության մեջ: Այնուհետեւ ԼՂՀ արտաքին գործերի նախարարությունը աշխարհի տերությունների կողմից օբյեկտիվ եւ կայուն հետեւողականություն է ակնկալել՝ ադրբեջանա-ղարաբաղյան եւ նմանատիպ հակամարտությունների նկատմամբ նույնատիպ մոտեցում կիրառելու հարցում՝ միջազգային իրավունքի կիրառման ժամանակակից միտումների ոգով եւ 2009թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ընդունած «Ժողովուրդների ինքնորոշման իրավունքի համընդհանուր իրականացում» բանաձեւին համապատասխան: Այդ կապակցությամբ ԼՂՀ ԱԳՆ-ն հիշեցնում է, որ Արցախի ժողովուրդը իր ինքնորոշման իրավունքից օգտվել է դեռեւս 1991-ին՝ հանրաքվեով արտահայտվելով անկախության օգտին, եւ իր կամքը հաստատել է 2006թ. ԼՂՀ սահմանադրության ընդունմամբ. «Արցախի (Լեռնային Ղարաբաղի Հանրապետության) ժողովրդի արդեն իսկ կայացած կամարտահայտության արդյունքների միջազգային ճանաչումը ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորման, Հարավային Կովկասի տարածաշրջանում կայունության եւ անվտանգության ամրապնդման եւ Արցախի Հանրապետության ու Ադրբեջանի Հանրապետության միջեւ քաղաքակիրթ հարաբերությունների կերտման համար պայմանների ստեղծման ամենակարճ ուղին է», ամփոփել է ԼՂՀ ԱԳՆ-ն: **Մ. Խ.**

# Ամերիկյան վարկ՝ ժողովրդավարությունը զարգացնելու համար

**Ըստ www.foreignassistance.gov կայքի (ԱՄՆ կառավարության՝ արտերկրյա օգնությունների կայքն է), Հայաստանը 2011 թվականին 45,2 մլն դոլարի վարկ է ստանալու ժողովրդավարությունը զարգացնելու նպատակով: Նշվում է, որ Հայաստանն այդ գումարը ծախսելու է մի շարք ոլորտներում. խաղաղության եւ կայունության ապահովման՝ 9,4 մլն դոլար, մարդու իրավունքների եւ կառավարման՝ 13,2 մլն դոլար, առողջապահության՝ 5,9 մլն, կրթության ու սոցիալական ծրագրերի համար՝ 1,9 մլն, տնտեսական ծրագրերի վրա ծախսվելու է օգնության առյուծի բաժինը՝ 13,4 մլն, հումանիտար ծախսերը կազմելու են 1,6 մլն դոլար: Ադրբեջանն այս տարի կստանա 29,2 մլն դոլար, Վրաստանը՝ 90,1 մլն:** **Մ. Խ.**

# Գարեգին Երկրորդը Նյու Յորքում վիրահատվել է ու նախագահել թեմական խորհրդի ժողովը

**Մի քանի օր առաջ Միացյալ Նահանգներում վիրահատվել է Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը: Նյու Յորքում հեռացվել է Վեհափառ հայրապետի լեղապարկը: Իսկ հունվարի 21-ին Նյու Յորքում Վեհափառը նախագահել է Միացյալ Նահանգների Արեւելյան թեմի թեմական խորհրդի ժողովը: Այս մասին տեղեկացանք Մայր աթոռ Ս. Էջմիածնի տեղեկատվական համակարգից:**

**Վեհափառ հայրապետը Մայր աթոռ կվերադառնա հունվարի վերջին:** **Ի. Պ.**

# Հերմինե Նաղդալյանը՝ ԵԽԽՎ տնտեսական հանձնաժողովի նախագահ

**ԵԽԽՎ-ում հայկական պատվիրակության անդամ Հերմինե Նաղդալյանը 1 տարով ընտրվել է ԵԽԽՎ տնտեսական հարցերով հանձնաժողովի նախագահ: Դա տեղի է ունեցել երեկ սկսված ԽՎ-ի լիագումար նիստից առաջ:** **Մ. Խ.**

# «Մենք չպետք է ԱՍԱԼԱ-ի մեջ որոնենք թուրք դիվանագետների սպանության իրականացնողներին»

*Հայտարարել է «Էրգենեքոնի» գործով մեղադրվող Թունջայ Գյունեյը*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Երբ որեւէ երկրում խորհրդարանը Հայոց ցեղասպանության ճանաչման նախաձեռնություն է հանդես բերում, պաշտոնական Անկարան, թուրքական կառավարությունը, քաղաքական կուսակցությունները, հասարակական կազմակերպություններն ու բարձրագույն ուսումնական հաստատությունները միաբերան աղաղակում են Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի՝ ԱՍԱԼԱ-ի «ահաբեկչության» մասին, թե ավելի քան 40 թուրք դիվանագետ է սպանել:

Որքան էլ թուրքական ժխտողականության դիրքերն սպառվեն եւ Հայոց ցեղասպանության հարցը հրապարակավ արծարծվի Թուրքիայում, այնուամենայնիվ, ժխտողականությունը որպես պաշտոնական թեզ շարունակում է այնտեղ ուժի մեջ մնալ, իսկ ԱՍԱԼԱ-ն դառնում է քավության նոխազ: Սակայն Թուրքիայում տեղի ունեցող կառուցվածքային փոփոխությունների հետ, անկախ ճշմարտության աստիճանից, մամուլը անդրադառնում է մինչ այդ տաբու համարվող խնդիրներին: Զուգընթաց դրան, երկրում կատարվում են մամուլի այս քայլերին նպաստող բացահայտումներ:

Վերջին տարիներին այդ բացահայտումներից խոշորագույնը կատարվեց 2008-ի մարտին, երբ երկրի 8 քաղաքներում թուրքական անվտանգության ուժերը միաժամանակյա գործողություններով ձերբակալեցին «Էրգենեքոնի» մի քանի տասնյակ անդամների, որոնց թվում պաշտոնաթող գեներալներ են: Թեեւ «Էրգենեքոնի» գործը երկրում անընդհատ ընդլայնվում է, աճում է նաեւ Թուրքիայում «խորքային պետության» ռազմականացված թեւը համարվող ահաբեկչական այս կազմակերպության ձերբակալված անդամների թիվը, միաժամանակ շարունակվում է վերջինների դատավարությունը, բայց «Էրգենեքոնի» գոյության բացահայտումը դեռեւս չի հանգեցնում բուն կազմակերպիչների բացահայտման:

Պարզապես դատավարության պայմաններում թուրքական մամուլը ցնցող հրապարակումներով հանդես գալու հնարավորություն է ձեռք բերում: Թերեւս այդ հրապարակումներից ամենացնցողը Թունջայ Գյունեյի հետ «Թաքվիմ» թերթի հարցազրույցն է, որը հունվարի 21-ի համարում արտատպել էր «Զամանը»: Ինչո՞ւ: Այն պարզ պատճառով, որ Թուրքիայում «Էրգենեքոն» ահաբեկչական կազմակերպության գործունեությունը բացահայտող առաջին փաստաթղթերը 2008-ի ապրիլին հայտնաբերվել էին հենց Գյունեյի լքված բնակարանում, քանի որ ինքն արդեն տեղափոխվել էր Կանադա, որտեղ էլ կարգվել հրեական համայնքի ռաբբի: *Տես էջ 2*

# Ինչ հնարավոր էր 1-2 ամսում, չէր կատարվում 3 տարի

## *Գյուղացիները ստացան պետության տրամադրած սուբսիդիաները*

Մոտ 3 տարի առաջ՝ 2008-ին Հայաստանի կառավարությունը նախաձեռնեց գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման փորձնական նախագիծը: Հայտնի է, որ գյուղատնտեսության ցածր շահութաբերության, անհրաժեշտ գրավի բացակայության եւ վարկերի բարձր տոկոսադրույքների պատճառով բազմաթիվ գյուղացիական տնտեսությունների համար վարկերն անհասանելի են: Հենց այդ նպատակով էլ մշակվեց վերոնշյալ ծրագիրը, սուբսիդիաների տրամադրման համար ընտրվեցին սահմանամերձ եւ բարձրլեռնային վայրերում գտնվող 60 գյուղական համայնքներ, որտեղ շատ են նաեւ սոցիալապես անապահով ընտանիքները: Մասնավորապես, խոսքը Գեղարքունիքի մարզի Ճամբարակի տարածաշրջանի եւ Շիրակի մարզի Աշոցքի ու Ամասիայի տարածաշրջանների գյուղական համայնքների մասին է:

Ո՞րն էր ծրագրի իմաստը: Այդ համայնքներում գյուղատնտեսական նպատակներով առեւտրային բանկերից ու վարկային կազմակերպություններից վերցված վարկերի տոկոսադրույքի 10 տոկոսը պետք է սուբսիդավորեր պետությունը: Այդ նպատակով կառավարության պահուստային ֆոնդից հատկացվեց 100 միլիոն դրամ: Ծրագրի իրականացումն էլ հանձնարարվեց ֆինանսների նախարարության գյուղական ֆինանսավորման կառույց (ԳՖԿ) ծրագրի իրականացման գրասենյակին:

Սակայն գործընթացի մեկնարկից մեկ տարի անց 100 մլն դրամից տեղաբաշխվել էր ընդամենը 653 հազար դրամը: Ծրագրի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կառավարությունը փոփոխություններ կատարեց իր որոշման մեջ: Ծրագրի իրականացման առաջին փուլում սուբսիդավորվում էին միայն բանկերի եւ վարկային կազմակերպությունների տված վարկերը, իսկ նոր որոշմամբ սուբսիդավորման ենթակա էին նաեւ միջազգային ֆինանսական կառույցներից (բացառությամբ Համաշխարհային բանկից ստացված միջոցների) ներգրավված գումարների տոկոսադրույքները: Բացի դրանից, վերոնշյալ գյուղական համայնքների այն բոլոր բնակիչների համար, որոնք հայտ ստանալու պահից սկսած վերջին երեք տարիների ընթացքում վարկ են վերցնում առաջին անգամ, վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորումն իրականացվում է ամբողջությամբ: Այսինքն, գյուղացուն տրվում է անտոկոս վարկ:

Տոկոսադրույքի սուբսիդավորման հայտը բանկերը կամ վարկային կազմակերպությունները պետք է ներկայացնեին ֆինանսների նախարարության գյուղական ֆինանսավորման կառույց ծրագրի իրականացման գրասենյակ: Վերջինս էլ պարտավոր է հայտը ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում բավարարել եւ վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման գումարը փոխանցել վարկառուի անհատական հաշվին:

Սակայն, այս փոփոխություններից հետո նույնպես, գումարների չնչին մասն էր հասել գյուղացիներին: 3 տարվա ընթացքում 100 մլն դրամից նրանք ստացել էին ընդամենը 15 տոկոսը՝ 15 մլն 600 հազար դրամ: Կառավարության անցյալ տարեվերջի նիստերից մեկի ժամանակ վարչապետ Տիգրան Սարգսյանն անթույլատրելի համարեց այն իրավիճակը, երբ պետությունը միջոցներ է գտնում գյուղացիների համար, բայց որոնք չեն հասնում նրանց: Նրա հանձնարարությամբ ֆինանսների նախարարը 10 օրվա ընթացքում կառավարությանը ներկայացրեց կառուցվածքային եւ կադրային փոփոխությունների առաջարկ, հիշյալ իրավիճակը շտկելու համար: Կառուցվածքային փոփոխություններից եւ ԳՖԿ գրասենյակի տնօրենի փոխվելուց հետո, ընդամենը 1-2 ամսվա ընթացքում 60 լեռնային եւ սահմանամերձ գյուղական համայնքներում բնակիչները ստացան սուբսիդավորման գումարները:

Նույն գյուղացիները, որոնք մի շարք գյուղեր այցելած «Հրապարակում» հաղորդմանը հայտնում էին, որ լսել են պետության կողմից իրենց սուբսիդիա տրամադրելու որոշման մասին, բայց չէին ստացել դրանք, գումարները ստանալուց հետո արդեն, նույն հաղորդման մեջ իրենց գոհունակությունն էին հայտնում:

Հարկ է ընդգծել, որ սուբսիդավորման տրամադրումը ճիշտ ժամանակին եղավ նաեւ նկատի ունենալով այն հանգամանքը, որ անցած տարին խիստ անբարենպաստ էր գյուղատնտեսության եւ գյուղի համար: Ենթադրելի է, որ սուբսիդիաների շնորհիվ գյուղում շրջանառու միջոցների ավելացումը կաշխուժացնի նաեւ գյուղական վարկավորման ծավալները: Այսինքն, այս ծրագրից գյուղատնտեսական արտադրանքի վրա որոշակի հետադարձ արդյունք պետք է սպասել արդեն այս տարի: Հուսանք, որ կառավարությունն ավելի հաճախ կընտրի ուղղակի օժանդակության տարբերակը եւ հետեւողական կլինի, որ այն առանց ուշացման հասնի հասցեատիրոջը:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# ԵՊՀ ռեկտորը կարեւորում է Հայաստանում կովկասագիտության զարգացումը

Երեկ «Հայելի» ակումբի հյուրը ԵՊՀ ռեկտոր **Արամ Սիմոնյանն** էր, որն ասուլիսի սկզբում անդրադարձավ Գիտությունների ազգային ակադեմիայի՝ վերջերս կայացած ընտրություններին: Ռեկտորը նույնպես մասնակցում էր ԳԱԱ ընտրություններին: Նա ցավով նշեց, որ 8 տեղեր թափուր մնացին. «Մինչդեռ, կարծում եմ, կային ընտրվելու արժանի մարդիկ, սակայն ելնելով որոշակի սուբյեկտիվ դրսեւորումներից՝ չընտրվեցին: Ընտրությունների անցկացման համար մթնոլորտն այնքան էլ նպաստավոր չէր: Այստեղ փոփոխությունների կարիք կա»: Արամ Սիմոնյանի փոխանցմամբ՝ ակադեմիկոսների հիմնական մասն «առաջացած» տարիքի մարդիկ են, օրինակ՝ հումանիտար ու հայագիտության բաժանմունքում ակադեմիկոսները գրեթե բոլորն 80 տարեկանից բարձր են. «Ինձ թվում է՝ արժեր, որ ակադեմիկոսների թվում լինեին ավելի երիտասարդներ, որոնք այսօր գործող գիտնականներ են: Որպես ակադեմիայի նախագահության անդամ՝ իմ կարծիքը կասեմ նախագահության նիստում, եթե դրա անհրաժեշտությունը լինի»: Ինչ վերաբերում է Արամ Սիմոնյանի չընտրվելուն, ռեկտորը նշեց, որ իրեն ընդամենը 1 ձայն չի բավականացրել:Նրա խոսքով՝ ամեն ընտրություն իր մեջ կրում է սուբյեկտիվ տարր. «Իհարկե, կարող են լինել նաեւ անձնական շարժառիթներ»:



Այնուհետեւ, խոսելով հայագիտության խնդիրներից, ռեկտորը նշեց, որ հայագիտության ոլորտում կան և՛ թերացումներ, և՛ նվաճումներ: Արամ Սիմոնյանն առանձնացրեց կովկասագիտության զարգացման հարցը: Այս ուղղությամբ ԵՊՀ-ն մտադիր է որոշակի քայլեր ձեռնարկել, ըստ ռեկտորի՝ համալսարանը մտադիր է 2012 թվականից իրականացնել կովկասագետ մասնագետների պատրաստում: Հայաստանում կովկասագիտությունը հետ է մնում կովկասագիտության այն զարգացումներից, որոնք տեղի են ունենում, օրինակ՝ հարեւան Վրաստանում: Ռեկտորը նաեւ կարեւորեց ադրբեջանագետների, օսմանագետների եւ քրդագետների պատրաստման հարցը, իսկ թուրքագետների վերաբերյալ նշեց. «Թեեւ բավականին բարձր է թուրքագետների պատրաստման մակարդակը, սակայն տեմպերն ու մասնագետների քանակը մեզ բավարարել չեն կարող»: Նա տեղեկացրեց, որ հայագիտության զարգացման հայեցակարգը պատրաստ կլինի մի քանի օրից:

Ասուլիսը, բնականաբար, չէր կարող զերծ մնալ նաեւ կոռուպցիայի վերաբերյալ հարցերից: «Հակակոռուպցիոն գործունեությունը պետք է կարեւորագույն խնդիր դառնա բուհերի համար՝ եւ ոչ միայն բուհերում: Յուրաքանչյուրիս պարտքն է իր լուման ունենալ հակակոռուպցիոն քաղաքականության մեջ», ասաց ռեկտորը: Այնուհետեւ խոսելով համալսարանում աշխատող կադրերի պատրաստվածությունից՝ Արամ Սիմոնյանը նշեց. «Ցավոք, ուսումնաօժանդակ ու սպասարկող կազմում ունենք մասնագետներ, որոնք շատ հեռու են պրոֆեսիոնալ մակարդակից: Նրանց մի մասից ազատվում ենք, մյուս մասից էլ ցանկություն ունենք ազատվելու եւ նրանց փոխարեն ընդունելու հատկապես երիտասարդ կադրերի»:

Ընդհանուր առմամբ՝ ռեկտորը ԵՊՀ-ի հիմնախնդիրներից առանձնացրեց բուհը երիտասարդ կադրերով համալրելը, կրեդիտային համակարգի կատարելագործումն ու մարկետինգի եւ մենեջմենթի մասնագետների պատրաստումը: Վերջիններիս պատրաստումը կնպաստի, որպեսզի տեղի գիտահետազոտական աշխատանքները դուրս բերվեն միջազգային շուկա:

Ի. Պ.

ՓԱՐԻԶ

# Ազնավուրը Իսրայելին կոչ արեց՝ ճանաչել Ցեղասպանությունը



**Փարիզում կիրակի օրը Երուսաղեմի համալսարանի մրցանակը ստանալու արարողության ժամանակ Շառլ Ազնավուրը Իսրայելի իշխանություններին խնդրել է ճանաչել 1915 թ. Հայոց ցեղասպանությունը: Այդ մասին հաղորդում է «Քոլ Իսրայել» ռադիոկայանը:**

**Իր ելույթում Ազնավուրը նշել է, որ վերջին տարիներին Թուրքիան բացահայտ հակաիսրայելական դիրք է բռնել եւ խրախուսում է հրեատյացությունը:**

**Քնեսեթում 2010-ի ապրիլին քննարկվել էր Հայոց ցեղասպանության ճանաչման թեման, սակայն իսրայելցի օրենսդիրները որոշում չէին ընդունել տվյալ հարցի առթիվ: 2007-ին Newsru.co.il կայքի խմբագրությունը հարցում էր անցկացրել «Իսրայելը եւ հայ ժողովրդի ցեղասպանությունը» թեմայով: Հարցումը կապված էր հայերի 1915 թ. զանգվածային բնաջնջումը ցեղասպանություն ճանաչելու անհրաժեշտության վերաբերյալ Հակազրպարտչական լիգայի արած հայտարարության հետ: Հարցման մասնակիցների 82,5 տոկոսը (ռուսալեզու իսրայելցիներ) նշել է, որ Հոլոքոսթ ապրած հրեաները իրավունք չունեն ժխտելու ուրիշ ժողովուրդների դժբախտությունները: 72,4 տոկոսը գտնում էր, որ Իսրայելը պարտավոր է Օսմանյան կայսրությունում հայերի 1915 թ. զանգվածային կոտորածները ճանաչել ցեղասպանություն: 43,8 տոկոսը կարծում էր, որ Ցեղասպանությունը պետք է ճանաչվի, նույնիսկ՝ Թուրքիայի հետ հարաբերությունների խզման գնով:**

# «Մենք չպետք է ԱՍԱԼԱ-ի մեջ որոնենք թուրք դիվանագետների սպանությունն իրականացնողներին»

*1-ին էջից*

Մինչդեռ նա Թուրքիայում հաճախելով հոգեւոր դպրոց, իմամի կրթություն էր ստացել, ընդգրկվել էր Ֆեթուլլահ Գյուլենի իսլամական համայնքում, աշխատում էր որպես հեռուստալրագրող: Մի խոսքով՝ Գյունեյը չափազանց առեղծվածային անձնավորություն է, «Էրգենեքոնի» առանցքային դեմքերից: Ոմանք նրան համարում են թուրքական լրտես, ոմանք էլ՝ ամերիկյան գաղտնի ծառայությունների գործակալ: Նա ունի «Էրգենեքոնի» «սեւ արկղի» համարում: Այսինքն, ինքը սերտ կապի մեջ է եղել ահաբեկչական այս կազմակերպության հետ, թեեւ 2010-ի նոյեմբերին եղել էր Թուրքիայում, սակայն չէր ձերբակալվել:

Համենայն դեպս, «Զամանի» արտատպած հարցազրույցում «Թաֆվիմ» թերթը Գյունեյին հարցրել է.

**- Գոյություն ուներ ԱՍԱԼԱ կոչված ահաբեկչական մի կազմակերպություն, որի անունը հայտնի է դարձել 1970-ական թվականներին թուրք դիվանագետների դեմ կազմակերպած ահաբեկչական գործողություններով: Որպես կազմակերպություն ինչպիսի՞ն էր ԱՍԱԼԱ-ն:**

- ԱՍԱԼԱ-ն կառավարության մակարդակով հարաբերությունների մեջ էր տարբեր երկրների հետ, որոնք այնուհետեւ սկսեցին հարաբերվել PKK-ի հետ: «Խորքային պետության» ավազակախումբը, որի մասին Թուրքիայում իմացան Սուսուրլուքի միջադեպով, արտերկրում մահափորձեր կազմակերպեց թուրք դիվանագետների դեմ: Ի՞նչ էր արել իբրեւ առասպելական դեմք ներկայացվող Չաթլին ԱՍԱԼԱ-ի դեմ, բացի հայկական մեկ եկեղեցի եւ երիտասարդական երկու միություն ռմբահարելուց: Չէ՞ որ նրանք մեր «հերոսներն» էին:

**- Այսինքն, ԱՍԱԼԱ-ն եւ Սուսուրլուքի խումբը համակցվա՞ծ են:**

- Մի՞թե այս «հերոսներից» կազմավորված խումբը մահափորձ չկազմակերպեց Հռոմի պապի դեմ: Մենք չպետք է ԱՍԱԼԱ-ի մեջ որոնենք արտերկրում թուրք դիվանագետների սպանությունն իրականացնողներին: Մարդասպաններին պետք է որոնել Սուսուրլուքի խմբում: Սպանված բոլոր դիվանագետներն անխտիր հատուկ ընտրված մարդիկ էին:

Որքանո՞վ է հավաստի Գյունեյի խոսքերը, դժվար է ասել: Բայց որ Սուսուրլուքի ավելի քան առեղծվածային ավտովթարում մահացած Աբդուլլահ Չաթլին 1980-ի սեպտեմբերի 12-ին պետական հեղաշրջումից հետո ԱՍԱԼԱ-ի դեմ պատասխան գործողությունների դիմելու հանձնարարական էր ստացել գեներալ Քենան Էվրենի վարչախմբից, իսկ 1990-ականների սկզբին ղարաբաղյան պատերազմի թեժ օրերին հաճախակի էր հայտնվում Ադրբեջանում եւ որպես պարագլուխ վերադաս էր Հռոմի պապ Հովհաննես Պողոս Երկրորդի դեմ մահափորձ իրականացնող Մեհմեդ Ալի Աղջայի, ակնհայտ է: Հատկանշական է, որ առ այսօր Թուրքիայում ԱՍԱԼԱ-ի անունն աղաղակողները, ներառյալ պետական կառույցները, անարձագանք են թողնում Գյունեյի խոսքերը:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# «Արտաքին պարտք-ՀՆԱ հարաբերակցությունը կմնա անփոփոխ»

## *Ֆինանսների նախարար Վաչե Գաբրիելյանը ներկայացրեց նախարարության գերակա խնդիրները*

Ֆինանսների նախարար **Վաչե Գաբրիելյանը** երեկ հրավիրված մամուլի ասուլիսում ներկայացրեց իր ղեկավարած նախարարության գերակա խնդիրները 2011-ի ընթացքում: Դրանք առնչվում էին պետական ծախսերի կառավարման արդյունավետության բարձրացմանը, երեք գերատեսչություններում բյուջետային ծրագրի նկարագրի (անձնագրի) ստեղծմանը, արտաքին պարտքի գրանցման եւ հաշվառման միասնական էլեկտրոնային համակարգի ներդրմանը, մի շարք ապրանքների համար շրջանառության ծավալների հաշվառման համակարգի կանոնակարգմանը: Մասնավորապես վերջինիս վերաբերյալ նախարարը հայտնեց, որ նախատեսվող օրենսդրական փոփոխությունները հնարավորություն կտան նվազեցնելու այդ ապրանքների ստվերային շրջանառությունը:



Պետական ծախսերի կառավարման արդյունավետության բարձրացման վերաբերյալ մեր հարցին, թե որքանո՞վ են հասարակության համար թափանցիկ լինելու պետական գերատեսչությունների ներկայացուցիչների, օրինակ, գործուղման ծախսերը եւ արդյունավետությունը, Վաչե Գաբրիելյանը պատասխանեց՝ ասելով միայն, որ այդ ծախսերի վերաբերյալ տեղեկությունները տեղադրված են կառավարության կայքում եւ ավելի թափանցիկ դարձնելու վերաբերյալ առաջարկներ լինելու դեպքում դրանք կքննարկվեն:

Ֆինանսների նախարարը, պատասխանելով լրագրողների հարցերին, անդրադարձավ Հայաստանի մակրոտնտեսական ցուցանիշներին: Նա հայտնեց, որ 2010-ին մեր երկրի արտաքին պարտքը կազմել է 3 մլրդ 795 մլն դոլար կամ համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 44,4 տոկոսը: 2011-2012-ին նույնպես արտաքին պարտք-ՀՆԱ այդ հարաբերակցությունը կպահպանվի: Պարտքի բեռը կսկսի նվազել 2013-ից: Ըստ Վաչե Գաբրիելյանի, նույն նվազումն է սպասվում նաեւ բյուջեի դեֆիցիտի ցուցանիշների մեջ:

ՀՆԱ-հարկեր հարաբերակցությունը 2010-ին կազմել է 16,9-17 տոկոս եւ այս տարի եւս կլինի այդ ցուցանիշին մոտ: Սակայն, նախարարը հայտնեց, որ անցյալ տարի նախատեսված 570 մլրդ դրամի փոխարեն հավաքվել են 591 մլրդ դրամի հարկային եկամուտներ:

Գնաճն անցյալ տարի բավականին բարձր էր, իսկ այս տարի Կենտրոնական բանկն ու ֆինանսների նախարարությունը կօգտագործեն իրենց լծակները՝ այն զսպելու համար: Վաչե Գաբրիելյանի գնահատականով, այս տարվա գնաճը կկազմի 5-5,5 տոկոս:

Ա. Մ.

ՀԵՌՈՒՍՏԱԽԱՂԱՐԿՈՒՄ

# «Շողակաթն» ու «Արարատը» չեն ամուսնանա

Գաղտնի ու փակ որոշումներ, գործունեության անորոշություն ու ոչ բարեխիղճ պահվածք աշխատակազմի հետ:

Հենց այսպես կարելի է անվանել Հանրային հեռուստաընկերության դիրքորոշումը «Արարատ» հեռուստաալիքի նկատմամբ: Շուրջ մեկ ամիս ընթացող խոսակցությունները, որ «Շողակաթը» միանում է «Արարատին», իրականությանը չեն համապատասխանում: Այսուհետեւ կապուղի չստացած «Շողակաթը» կհեռարձակվի «Արարատի» հաճախականությամբ, «Արարատի» ճակատագիրն էլ շարունակում է մնալ անորոշ:

«Արարատ» հեռուստաընկերության փակման կապակցությամբ բազմաթիվ մտավորականների դժգոհությանն ընդառաջ Հանրային խորհրդի մշակութային հարցերով զբաղվող հանձնաժողովը կազմակերպել էր քննարկում:

Հանրային հեռուստատեսության ներկայացուցիչ **Ալեքսան Առաքելյանի** ներկայացմամբ՝ իրավաբանորեն «Արարատ» եւ «Շողակաթ» ալիքները չեն միավորվում: Նրա պարզաբանմամբ՝ «Արարատը» առանձին հեռուստաընկերություն չէ, հանրայինի մի ստորաբաժանումն է եւ չի դադարեցրել իր աշխատանքները: Հանրայինը մտադիր է արբանյակային կապուղիով հեռարձակվող ծրագիրը վերածել համահայկական ծրագրի եւ անվանել «Արարատ»: Առայժմ անորոշ է «Արարատ» հեռուստաալիքի 44 աշխատակիցների հարցը, որոնք Հանրայինի անձնակազմին մաս են կազմում:

Հարցին, թե ինչու «Շողակաթը» չի մասնակցել ՀՌԱՀ-ի մրցույթին, «Շողակաթ» Հ/Ը ծրագրերի ղեկավար **Արա Գալոյանն** ասաց, որ մասնակցելը սխալ կլիներ, քանի որ մրցույթ հայտարարված էր ընդհանուր եւ լրատվական ուղղվածություն ունեցող ալիքների համար, իսկ «Շողակաթը» հոգեւոր-մշակութային ալիք է:

Ամենայն հավանականությամբ, տեղեկանալով, որ «Շողակաթը» զրկվելու է կապուղուց, «Շողակաթի» եւ Հանրայինի միջեւ պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ «Շողակաթի» ծրագրերը հեռարձակվելու են «Արարատ» ալիքով:

«Կան բազմաթիվ ընկերություններ, որոնց արտադրանքը թողարկում է Հանրային հեռուստաընկերությունը: Նույն ձեւով՝ մի քիչ ավելի սերտ համագործակցությամբ, Հանրայինի համար հաղորդումներ կպատրաստի «Շողակաթը», ասաց Հանրային հեռուստաընկերության ծրագրերի ղեկավար **Մարատ Օրդյանը**:

Երկու հեռուստաընկերությունների միջեւ համագործակցությունն այնքան է սերտացել, որ Հանրայինը որոշել է «Արարատի» փոխարեն օգտագործել «Շողակաթի» անվանումն ու լոգոն:

Օրդյանի փոխանցմամբ՝ երկար են մտածել լոգոյի մասին, «Շողակաթ» անվանման մասին չեն էլ մտորել, մինչ այն պահը, երբ «Շողակաթի» աշխատակիցները նման առաջարկություն են արել: Առաջարկությունը սկզբում շփոթ է առաջացրել Հանրայինի աշխատակազմի մեջ, բայց շողակաթցիները շարունակել են պնդել. «Մենք էլ մտածեցինք, իսկ ինչու՞ ոչ, գեղեցիկ լոգո է, գեղեցիկ բառ», ասաց Օրդյանը: Տրամաբանական է, որ եթե «Շողակաթի» աշխատակազմը կարողացել է պնդել, որ «Արարատի» փոխարեն իրենց լոգոն ու անվանումը լինեն, ապա նորաստեղծ հոգեւոր-մշակութային ալիքի ռազմավարությունն էլ կփոխվի:

Զարմանալի է որ «Արարատին» եթերազրկելու վերաբերյալ «Արարատի» աշխատակազմն ու պրոդյուսերն իմացել են 2 օր առաջ:

«Արարատի» պրոդյուսեր **Արամ Սուքիասյանին** նախ տեղեկացրել են, որ «Շողակաթը» միանալու է «Արարատին»: «Առաջարկն ընդունել ենք սիրով: Մեզ ասացին, որ օրական մի քանի ժամ պետք է տրամադրենք «Շողակաթին»: Համաձայնեցինք: Սակայն հունվարի 19-ին մեզ ասացին, որ «Արարատը» հունվարի 21-ից եթեր դուրս չի գալու», ասաց Սուքիասյանը:

Նրանց փորձերը՝ ղեկավար կազմից որեւէ բացատրություն ստանալ, ապարդյուն էին: «Այն, ինչ տեղի է ունեցել, միակ հստակ պատասխան տվողը Ալեքսան Հարությունյանն է, որը ենթադրվում էր, որ պետք է այստեղ լինի, բայց չի եկել»:

**Արամ Սուքիասյանի** փոխանցմամբ՝ հունվարի 21-ից «Շողակաթի» եթերում «Արարատից» որեւէ հաղորդում չի հեռարձակվել:

«Ամենեւին չենք թերագնահատում «Շողակաթի» գործունեությունը, սակայն, կարծում ենք, որ մշակույթի համար պետք է գործի առանձին ալիք, ընդ որում՝ պետական հովանավորությամբ: Բացի դրանից «Շողակաթը» ելնելով իր գաղափարախոսությունից չի կարող հեռարձակել մշակույթին վերաբերող ամեն ինչ», ասաց Հանրային խորհրդի մշակույթի հանձնաժողովի նախագահ **Գագիկ Մանասյանը**:

Քննարկման ժամանակ Մարատ Օրդյանը թեթեւակի քննադատեց «Արարատի» գործունեությունը՝ հավելելով, որ չկարողացավ իրագործել այն, ինչ իրենից ակնկալում էին: Պրոդյուսերն էլ հստակեցրեց. «Արարատը սնվում է Հանրայինից: Հանրայինի ղեկավարությունն է գումար տրամադրում «Արարատի» հաղորդումների նկարահանման համար: Բայց քանի որ Հանրայինի ղեկավարությունը նախընտրում է սերիալների վրա գումար ծախսել, իրենք չեն կարողանում անել այն, ինչ ցանկանում են»:

Ավելի քան մեկ ժամ տեղի ունեցած քննարկման արդյունքում Հանրային խորհրդի մշակույթի հարցերով հանձնաժողովը քվեարկությամբ որոշում կայացրեց, համաձայն որի պահանջում են, որ «Արարատը» չմիանա «Շողակաթին», եւ վերականգնվի մինչ հունվարի 21-ի «Արարատի» կարգավիճակը:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

***Հ.Գ.*** *Երկու տարի առաջ «Արարատ» հեռուստաալիքի բացման արարողությանը ներկա էին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանն ու մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը: Ողջունելով նման հեռուստաալիքի ծնունդը՝ վարչապետն ու նախարարը ասացին, որ հայկական եթերը վաղուց էր զգում նման հեռուստաալիքի անհրաժեշտությունը, հույս հայտնելով, որ «Արարատը» կկարողանա լավագույնս ներկայացնել հայկական ու համաշխարհային մշակույթը: Զարմանալի է, որ երկու տարի անց միակ մշակութային ալիքի փակման կապակցությամբ լռում եւ դժգոհություն չեն հայտնում վարչապետն ու նախարարը:*

# Մինչեւ փետրվար հացի գինը կշարունակի բարձրանալ

## *Կթանկանան հրուշակեղենն ու մակարոնը*

*1-ին էջից*

Պողոսյանը նշում է՝ չկա բանավեճ, պատասխանատու կառույցները պարզաբանումներ չեն տալիս, շուկայում ստեղծված իրավիճակը չեն ներկայացնում: «Մեզ պետք է լիարժեք տեղեկատվություն, թե որքան են ցորենի ներկրման ծավալները, արժեքը, շահույթի տոկոսը, եւ որքանով է շահույթը հարկվում: Եթե այս խնդիրները պատշաճ ընթանան, երկրում չեն լինի նմանատիպ տագնապներ», ասաց Պողոսյանը: Նա փաստում է, որ միակ պատասխանատու մարմինը՝ Տնտեսական մրցակցության պետական հանձնաժողովը, օրենքով սահմանված իր գործառույթները չի իրականացնում, հատուկ սահմանված պատժաչափ չի կիրառում:

Տնտեսագետ Սամվել Ավագյանի կանխատեսմամբ՝ եթե գյուղատնտեսությունում ճգնաժամ չգրանցվի, տարվա ընթացքում համաշխարհային շուկայում ցորենի գների կտրուկ աճ չի նկատվի: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա կարճաժամկետ հատվածով Հայաստանում կանխատեսվում է ալյուրի եւ հացի գնի թանկացում:

«Այսօր ներկրող ընկերություններից իրացվող ալյուրի մի մասը գնվել է նախքան թանկացումը, մյուս մասը թանկացման պայմաններում գնված ցորենից է: Հետեւաբար առաջիկայում, երբ ներկրողները սկսեն իրացնել բացառապես թանկ գնով ձեռք բերված ցորենի ալյուրը, հնարավոր է, որ մինչեւ փետրվար Հայաստանում հացի գները դարձյալ կբարձրանան», ասաց Ավագյանը:

Տնտեսագետի ներկայացմամբ, նախորդ օրվա տվյալներով, համաշխարհային շուկայում մեկ տոննա ցորենի գինը կազմել է 300 դոլար: Սա վերջին 30 ամսվա ընթացքում գրանցված ցորենի ամենաբարձր գինն է: Մեր տարածաշրջանում նկատվել է ցորենի գների կտրուկ բարձրացում: «Փոթի» նավահանգստում արդեն միջնորդ ընկերությունների հայ ներկրողները մեկ տոննա ցորենը գնում են 400 դոլարով՝ տարեվերջի 350 դոլարի փոխարեն:



ՖՈՏՈԼՈՒՐ

Սամվել Ավագյանի փոխանցմամբ՝ Եվրոմիության տարբեր վերլուծական կենտրոններ հայտարարություններ են տարածում, որ կառույցն այս տարի քիչ ցորեն է արտահանելու: Բացի դրանից՝ Ալժիրում, Թունիսում եւ Հորդանանում, պարենային ճգնաժամը մեղմելու նպատակով, մեծաքանակ ցորեն է ներկրվում: Ցորենի գնի բարձրացման վրա ազդել են Ավստրալիայում եւ Բրազիլիայում տեղի ունեցած ջրհեղեղները:

Արտաքին շուկայի խնդիրներից զերծ մնալու համար Հայաստանը պետք է հետեւի Ռուսաստանի օրինակին եւ ավելացնի ցորենի պետական ռեզերվները: Սակայն այսօր մեր պետական ռեզերվը կազմում է 50.000 տոննա, որը մեկ ամսվա պաշար է եւ պահվում է «սեւ օրվա» համար: Շուրջ մեկուկես ամսվա պաշար էլ ունեն մասնավոր ընկերությունները, սակայն կառավարությունը լծակ չունի՝ ստիպելու այդ ընկերություններին, որ ցորենը վաճառեն էժան գներով:

Պողոսյանի փոխանցմամբ՝ վերջերս կատարված մոնիտորինգով հացի գնի եւ քաշի տարբերությունը կազմել է մինչեւ 30 տոկոս: Հացի գնի թանկացմանը կհաջորդի ապրիլից գազի գնի բարձրացումը, ու 70.000 դրամով ապրող բժիշկը պետք է ընտրություն կատարի՝ տանը էլեկտրաէներգիա եւ գազ օգտագործե՞լ, թե՞ խղճուկ աշխատավարձով ուտելիք գնել կամ երեխայի համար գրենական պիտույք ու հագուստ:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ACBA-CREDIT AGRICOLE BANK

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն հայտարարում է Բանկի վարչական մասնաշենքի շինարարության մրցույթ՝ Դավթաշեն թաղամաս Տիգրան Պետրոսյան փողոց 31/1,31/4 հասցեով:

Մրցույթի պայմաններին ծանոթանալու համար կարող եք զանգահարել (010) 31-88-88 հեռախոսահամարով կամ այցելել Բանկի «Գնումների և մատակարարման» բաժին Բագրատունյաց փ. 16/2 հասցեով՝ ժամը 09:30-16:00-ն (աշխատանքային օրերին):

Մրցույթի անցկացման ժամկետն է մինչև ս.թ. փետրվարի 11-ը:

# Միասին, բայց միայն կողք կողքի տարբերակով

## Կիպրոսի պաշտոնական տեսակետը. «Թուրքիան խստացնում է օկուպացիան, վերաբնակեցնում հյուսիսը, վաճառում հույն կիպրացիների ունեցվածքը»

***Յուրաքանչյուր հակամարտություն մի քանի երես ունի ու առնվազն տեղի ունեցածի մի քանի «ճշմարիտ» բացատրություն կամ նախապատմություն: Ու թեեւ իրականությունը մեկն է, հակամարտող կողմերին հարցնելիս տրամագծորեն տարբեր «իրականության» ես հանդիպում, առավել եւս, երբ հակամարտությունը երկար ժամանակագրություն ունի:***

***Այսօր եւ վաղը՝ հունվարի 25-26-ին Ժնեւում տեղի կունենա բանակցությունների հերթական ռաունդը ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունի եւ Կիպրոսի նախագահ Դեմետրիս Խրիստոֆիասի ու թուրք կիպրոսցիների, կամ ինչպես իրենք են իրենց անվանում՝ չճանաչված Հյուսիսային Կիպրոսի նախագահ Դերվիշ Էրողլուի մասնակցությամբ՝ քննարկելու կիպրոսյան խնդրի լուծման ուղիները: Կողմերը, որքան էլ ցանկալի լիներ, թեեւ ակնկալիքներ ունեն, սակայն այնքան լավատես չեն, որքան ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի՝ Կիպրոսի հարցով հատուկ խորհրդական Ալեքսանդր Դաուները, որը հույս է հայտնել, թե այս հանդիպումը կարող է առաջընթաց գրանցել:***

### Թուրքիայի նպատակը կղզին բաժանելն է

Հույն կիպրացիներն առանձնակի հույսեր չեն կապում ժնեւյան բանակցությունների հետ: Այդպիսին է մոտեցումը Կիպրոսի կառավարության խոսնակ, նախագահի ներկայացուցիչ **Ստեֆանոս Ստեֆանուի**, որի հետ հանդիպումը տեղի ունեցավ Կիպրոսի նախագահի նստավայրում՝ Եվրոպական հարեւանության լրագրողական ցանցի՝ հունվարի 16-21-ը հայ եւ ադրբեջանցի լրագրողների մասնակցությամբ հերթական սեմինարի շրջանակներում:

«Մեծ հույսեր չպետք է ունենալ: Այս հանդիպման կոնկրետ խնդիրը քննարկվող հարցերում համաձայնության ավելի շատ ընդհանուր կետեր գտնելն է: Իսկ վերջին շրջանի երկխոսության գործընթացում որեւէ դրական պահ չի դիտարկվում», գտնում է Կիպրոսի նախագահի ներկայացուցիչը:



*Ստեֆանոս Ստեֆանու*

Երկու մասի բաժանված Կիպրոսի խնդրի հիմքում Ստեֆանուն 1974-ից տեղի ունեցած կրկնակի հանցագործություն է տեսնում ինչպես հույն, այնպես էլ թուրք կիպրացիների նկատմամբ: Առաջինը, ըստ հունական կողմի, ռազմական հեղաշրջումն էր Հունաստանում տիրող զինվորականության կողմից, եւ երկրորդը՝ մի քանի օր անց Թուրքիայի անօրինական ներխուժումը Կիպրոս՝ տարածքի գրեթե 36 տոկոսի օկուպացմամբ:

«Մինչ այդ թուրք եւ հույն կիպրացիները ապրում էին ողջ հանրապետության տարածքում միասին: Հետո Թուրքիան պահանջեց, որ հունական կողմում ապրող թուրք կիպրացիները վերաբնակվեն հյուսիսում, իսկ այնտեղ ապրող հույն կիպրացիները բռնի արտաքսվեցին իրենց տներից», ներկայացնում է Ստեֆանուն՝ ինքն իրեն օրինակ բերելով. «Ես տասը տարեկան էի, ինձ իմ գյուղից ու տնից արտաքսեցին մոտ 200.000 փախստականների հետ, այսինքն՝ հանրապետության բնակչության 1/3-ի մասին է խոսքը»:

1974-ից փորձեր են արվել՝ լուծելու բուֆերային գոտիով եւ ՄԱԿ-ի խաղաղապահների ներկայությամբ «շփվող» Կիպրոսի հարցը, բայց ոչ հունական, ոչ թուրքական կողմում հույս չունեն, թե կարող են վերադառնալ համատեղ, միասին կյանքին այնպես, ինչպես մինչեւ 1974-ը: Հունական կողմի համար հարցի լուծումը «օկուպացիայի վերացումն է, Կիպրոսի տարածքային ամբողջականության վերականգնումը, նաեւ երկգոտի, երկհամայնք համադաշնությունը»: Հունական եւ թուրքական համայնքները, ըստ այդմ, կլինեն համակառավարիչ, յուրաքանչյուր համայնք կունենա իր տարածքը, բայց մեկ քաղաքացիությամբ, մեկ միջազգային ներկայացվածությամբ:

Թե ինչու այս ամենում հունական եւ թուրքական կողմերը չեն կարողանում հասնել համաձայնության, պատճառ է նշվում Թուրքիան: Դրանով հանդերձ, հունական կողմն ակնկալում է, որ Թուրքիան մեծացնի իր հուսալիությունը, մինչդեռ վերջինս «հրահրիչ ու կոշտ դիրքորոշում է ցուցաբերում»: 2008-ից վերականգնված բանակցություններում հունական կողմը լավատեսություն չունի, քանի որ «Թուրքիան խստացնում է օկուպացիան, վերաբնակեցնում է հյուսիսը, վաճառում հույն կիպրոսցիների ունեցվածքը»:

Թուրքական կողմում Թուրքիայի զինուժի առկայությունը հույների անվտանգության խնդիր է դնում, մինչդեռ հույն-կիպրացիները ընդունում են, որ միասնական պետության մեջ թուրք-կիպրացիները կարող են բնակչության 80/20 հարաբերակցությամբ միասին կառավարել երկիրը: «**Ազգի**» հարցին, թե ինչպես գնահատել այն հանգամանքը, որ թուրք-կիպրական հատվածում գնալով մեծանում է Թուրքիայից վերաբնակվածների թիվը՝ փոխելով կղզու բնակչության կազմը, Ստեֆանուն ներկայացրեց հունական կողմի դիրքորոշումն առ այն, որ դա ծառայում է Թուրքիայի՝ կղզին բաժանելու նպատակին, եւ ռազմական հանցագործության արդյունք է:

Հունական կողմը վստահեցնում է, որ թուրք կիպրոսցիները հյուսիսում փոքրամասնություն են, այն դեպքում, երբ մի քանի անգամ մեծ է Թուրքիայի քաղաքացիների թիվը: Ամեն դեպքում, հունական կողմը բանակցությունների շրջանակներում առաջարկում է մարդահամար անցկացնել որեւէ միջազգային կազմակերպության միջոցով՝ ճշտելու կիպրացիների եւ վերաբնակիչների թվաքանակը: «Խնդրի լուծումը պետք է նկատի առնի վերաբնակեցման դադարեցումը, նաեւ արտաքսումը նրանց, ովքեր արդեն տեղափոխվել են Թուրքիայից Կիպրոս: Պետք է քննարկել նաեւ, թե որքան վերաբնակիչ կարող է ապրել Կիպրոսում, որոնց կարող է տրվել քաղաքացիություն»:

### Թուրքիայի միջամտությունը ցանկալի չէ թուրք կիպրացիներին

Վերաբնակված թուրքերի թվաքանակի եւ ոչ միայն այդ առնչությամբ հունական կողմից տարբեր կարծիքներ ունի թուրք-կիպրական կողմի ղեկավարությունը: Երկար տարիներ տարբեր պաշտոններ զբաղեցրած, նաեւ 2005-ից 2010-ի ապրիլ, այսպես կոչված Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության նախագահ ընտրված **Ալի Թալաթը** չափազանցված է համարում վերաբնակիչների թվաքանակի հունական կողմի տվյալները, համարելով, որ իրականում Կիպրոսի թուրքական բնակչությունը ներկայումս կազմում է ընդհանուրի 25-30 տոկոսը:

Բանակցություններ անցկացնելու տարբեր փորձերից, նախաձեռնություններից ու ձախողումներից հետո ՄԱԿ-ի հովանու ներքո անցկացվող կիպրոսյան բանակցությունների ներկայիս փուլը մեկնարկել է 2008-ի սեպտեմբերին՝ Կիպրոսի նախագահ Դեմետրիոս Խրիստոֆիասի եւ թուրքական կողմը ներկայացնող Ալի Թալաթի մասնակցությամբ:

2004-ից Եվրոմիության անդամ դարձած Կիպրոսի հյուսիսային հատվածի հետ շփումներ ԵՄ մակարդակով չկան՝ համարելով այն Կիպրոսի Հանրապետության կողմից չվերահսկվող տարածք: Առանց հարցը լուծելու Կիպրոսի ԵՄ անդամակցությունը Թալաթը համարում է խնդիրը լուծելուն խանգարող հանգամանք: Գրեթե երկու տարի բանակցություններին մասնակցած Թալաթը, որի համոզմամբ Կիպրոսի հյուսիսային հատվածի ներկայիս ղեկավարությունն, ընդհանուր առմամբ, շարունակում է իր իսկ վարած քաղաքականությունը, գտնում է, որ Կիպրոսի խնդիրը համայնքների խնդիրն է, որ դարձել է քաղաքական:



*Ալի Թալաթ*



*Հյուսիսային Կիպրոսի թուրք զբոսաշրջիկները*

Թալաթի բացատրությամբ, Կիպրոսի հյուսիսի համար հարցի լուծումն առավել արդիական է, քանի որ առանց դրա զարգացման հնարավորություններ չկան, երբ հարավում տնտեսությունն ուղղակի ծաղկում է: Հյուսիսային Կիպրոսի մեկուսացման պատճառներից մեկը միայն Թուրքիայի կողմից ճանաչված լինելն է, եւս մեկ պատճառ էլ Թուրքիայի զինուժի ներկայությունն է, որն, ըստ հյուսիսի նախկին առաջնորդի, ոչ թե ներխուժում է, այլ ազատագրում: «Թուրք-կիպրացիներն են խնդրել Թուրքիային միջամտելու, եւ քանի դեռ իրավիճակն այսպիսին է, մեզ անհրաժեշտ է թուրքական աջակցությունը եւ զինուժի ներկայությունը», վստահեցնում է Ալի Թալաթը:

ԵՄ դերակատարությունը Կիպրոսի հարցում «սխալ» որակելով՝ Ալի Թալաթը գտնում է, որ ընդունելի էր 2004-ի ապրիլի 24-ին հանրաքվեի դրված ՄԱԿ-ի նախկին գլխավոր քարտուղար Քոֆի Անանի ծրագիրը, որին թուրք-կիպրացիները կողմ քվեարկեցին, իսկ հույն-կիպրացիները՝ դեմ, թեեւ, վեջիններիս բացատրությամբ, հույները դեմ են քվեարկել կոնկրետ ծրագրին եւ ոչ թե հարցի լուծմանը:

Համարելով, որ Կիպրոսը ԵՄ-ին անդամակցեց Հունաստանի՝ ԵՄ-ին պարտադրելու միջոցով, Թալաթը վստահեցնում է, որ հարցի լուծումը համադաշնությունն է, բայց երկու հավասարազոր պետությունների միասնությամբ, երկգոտի, երկհամայնք ձեւաչափով:

### Թուրք-կիպրացիներն ուզում են փոքրացնել Թուրքիայի միջամտությունը

Ալի Թալաթի դիրքորոշմանը համաձայն չէ Կիպրոսի հյուսիսային հատվածի առաջին առաջնորդ Ռաուֆ Դենքթաշի որդին՝ **Սերդերը**, որ տարբեր պաշտոններ է զբաղեցրել թուրքական հատվածում, այդ թվում՝ եղել է բաժանված Նիկոսիայի թուրքական հատվածի քաղաքապետ, նաեւ օրենսդիր մարմնի անդամ, փոխվարչապետ: Այժմ կուսակցական առաջնորդ ներկայացող Սերդեր Դենքթաշը կողմ է Կիպրոսի հյուսիսում առանձին եւ անկախ պետության գոյությանը, հենց այդ պատճառով էլ ինքն իրեն ներկայացնում է որպես «Հյուսիսային Կիպրոսի թուրքական պետության քաղաքացի, որի համար Թուրքիայի կամ հունական Կիպրոսի քաղաքացի չլինելը բազում խնդիրներ է ծնում՝ անհնար է ճանապարհորդել, ծրագրել երեխաների ապագան, գործարարությամբ զբաղվել, բայց դիրքորոշումը մնում է նույնը»:

Դենքթաշի վստահեցմամբ, երկու համայնքներն այլեւս չեն կարող ապրել խառը, այլ միայն կողք կողքի: Ու չնայած 2003-ից Կիպրոսում կա կանաչ գոտի, որ հնարավորություն է տալիս կղզու բնակիչներին ամենայն հանգստությամբ եւ առանց դժվարությունների հունական հատվածից անցնելու թուրքական եւ հակառակը, Դենքթաշի տվյալներով, հունական կողմում թուրքերին քամահրանքով են վերաբերվում:



*Սերդեր Դենքթաշ*

Կիպրոսի հյուսիսային հատվածի առաջին նախագահի որդին նաեւ դեմ է Թուրքիայի քաղաքացիներով թուրք-կիպրական հատվածը լցնելուն: «Մենք ուզում ենք փոքրացնել Թուրքիայից վերաբնակվողների թվաքանակը: Այդպիսով աշխատանք ապահովել հենց թուրք-կիպրացիների համար՝ ապագայում ԵՄ անդամ կամ գոնե հարեւան լինելու հեռանկարով», ասում է Դենքթաշը: Ինչ վերաբերում է Թուրքիայից կախվածությանը, ապա, Սարդարի խոսքերով, «Կախվածությունը Թուրքիայից որպես դեպի միջազգային հանրություն տանող միակ պատուհան շատ մեծ է, թուրքական դրամ, թուրքական հեռախոսակոդ, թուրքական վարկեր... Եվ հիմա Թուրքիան ավելի շատ է փորձում միջամտել, խառնվում է անգամ բյուջեի տնօրինմանը: Մենք ուզում ենք, որ Թուրքիան ավելի քիչ միջամտի մեր ներքին գործերին»:

**ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**Նիկոսիա-Երեւան**
*Շարունակելի*

*Հ.Գ. «**Ազգի**» հարցին, թե ինչպիսին է Հյուսիսային Կիպրոսի վերաբերմունքը այլ չճանաչված հանրապետությունների ու տարածքների նկատմամբ, Ալի Թալաթը պատասխանեց. «Դա կախված է այդ տարածքներում ապրող ժողովրդի կամքից, բոլորը պետք է ընդունեն այդ կամքը: Դա ճիշտ է ինչպես Հյուսիսային Կիպրոսի, այնպես էլ յուրաքանչյուր երկրի համար: Բայց դա չի նշանակում, թե բոլոր չճանաչված երկրները պետք է ճանաչվեն, բայց պետք է պարտադիր հաշվի առնվի այնտեղ ապրող մարդկանց կամքը»:*

ԱԶԳ

## Միջազգային

# «Արմենիա»-ն եւ Երկիր մոլորակի երկու տիտանները



Երբեմն ինքս ինձ միշտ եմ անում՝ արդյոք չափազանց վերամբարձ չի՞ հնչում հայերեն «գիտարշավ» բառը: Գիտական արշավ. իրականում, ասենք՝ Ֆյոդոր Կոնյուխովն անձնակազմի հետ օդանավով թռչում է Չիլի, որպեսզի այնտեղից առագաստների ներքո միայն Հորն հրվանդան հասնի, Ստելլա Մարիս մատուռում ուղղափառ խաչ տեղադրելու համար: Եվ այդ անցումը մամուլն անվանում է «էքսպեդիցիա»: Հայերեն՝ գիտարշավ: Մի քանի տարի Կամչատկայի արխիվներում ես նյութեր եմ հավաքել ժամանակին դեպի Սառուցյալ օվկիանոսի ափեր շնասահնակներով կատարված արշավանքի մասին, որին պատմաբանները տվեցին «Սառցե ուղի» անվանումը եւ չէի մտածի, չէի ենթադրի, թե մեր արշավանքը թերթերը կորակեն որպես գիտարշավ: Չի՞ նշանակում, որ նման դեպքերում ճանապարհորդն իրոք հավակնում է բարձրահունչ «գիտական» ածականին: Իհարկե, «գիտական» հասկացությունը չես համեմատի այնպիսի առօրեական բառերի հետ, ինչպիսիք են՝ «ուղեւորություն», «առաքում»: Չէ՞ որ բառն ունի նաեւ այդպիսի բացատրություններ: Այդ կապակցությամբ ինչպե՞ս չհիշեմ նման մի գիտարշավի մասին, որն իրագործվել է հիմնականում այն վայրերում, որտեղ արդեն ավելի քան մեկ ամիս մենք ենք լողում: Եվ այստեղ ես պարզապես պարտավոր եմ քիչ ավելի մանրամասն պատմել: Ինքս չափազանց հանգամանալից ու մանրամասն եմ ուսումնասիրել (իհարկե՝ որպես սովորական մահկանացու ընթերցող) այդ գիտարշավի պատմությունը, որի մասին ուզում եմ խոսել:

1731 թվականին Անգլիայում ծնվեց մի մարդ, Էրազմ անունով: Էրազմ Դարվին: Բժիշկ, գիտնական, բնագետ, պոետ: Սակայն նա աշխարհին ապշեցրեց հիմնականում իր բնափիլիսոփայական աշխատություններով: Դա նշանակում է՝ բնության փիլիսոփայություն, այսինքն՝ բնության մտահայեցողական մեկնաբանություն, դիտարկված իր ամբողջականության մեջ: Բայց ամենազարմանալին այն է, որ իր պոեմներում Էրազմ Դարվինը կենդանիների եւ բույսերի էվոլյուցիայի մասին իր հայացքները շարադրում էր, ելնելով նրանց վրա արտաքին միջավայրի ազդեցությունից: Նրա այդ հայացքներին քչերն էին համամիտ: Բայց նրան չափազանց գնահատում էին ոչ միայն իր ժամանակակիցները: Էրազմ Դարվինը մահացավ 1802 թվականին եւ մահից առաջ ասաց, որ հեռու չէ այն օրը, երբ բոլորը կհամոզվեն իր ճշմարտացիության մեջ: Յոթ տարի անց ծնվեց նրա թոռը՝ Չարլզ Դարվինը: Ասում էին, որ նա շատ նման է իր պապին: Եվ ահա, պապի հարյուրամյակի կապակցությամբ, 1831 թվականին 22-ամյա Չարլզն ուղեւորվեց շուրջերկրյա նավարկության՝ «Բիգլ» ռազմական հետախուզական նավով: Ասում էին, թե այդ ճամփորդությունը տեղի չէր ունենա, եթե չլիներ նրա մեծ պապի հիշատակը, մեծ հեղինակությունը այն բժշկի, բնափիլիսոփայի եւ պոետի, որին Անգլիան չէր մոռանում:

Այս տողերը ես գրում էի «Բիգլ» արշավանավի անունը կրող նեղուցում: Հիշում էի նրա մասին նաեւ այլ ջրանցքներում, որոնք առատորեն սփռված են ողջ Հրո Երկրում եւ որտեղ Չարլզ Դարվինը նավարկել է արդեն նավակներով, ուսումնասիրելով հնդկացիական յագանա ցեղի կյանքն ու կենցաղը: Հաճախ եմ մտածել, որ թոռը դարձավ իր պապի պարզապես առարկայացված անմահությունը: Նրա հայտնի աշխատություններից մի քանիսի վերնագրերը՝ «Մարդու ծագման մասին», «Ընտանի կենդանիների եւ մշակաբույսերի փոփոխությունները» եւ այլն, վերցված են պապի աշխատություններից: Չարլզ Դարվինը մահացավ 1882 թվականին, երբ ճիշտ Էրազմ Դարվինի տարիքին էր: Երկուսն էլ յոթնասուներեք տարեկան էին: Եվ թոռը մահից առաջ ասաց, որ իր պապի կյանքը երկարացրել է 73 տարով: Ըստ իս, թոռն իր պապի կյանքը երկարացրեց մի ողջ հավերժությամբ: Ես չեմ կարծում, թե հիշելով Դարվինի մասին, նրա իրոք գիտական արշավանքի մասին, ես դուրս եմ գալիս մեր համեստ ծովարշավին նվիրված ռեպորտաժի ժանրի շրջանակներից, որը հայերենով գուցե չափազանց բարձր է հնչում: Բայց ամեն ինչ տրամաբանական է, քանզի, ինչպես արդեն նշել եմ, «Հորն հրվանդանի շրջանցում» հասկացության մեջ ներառվող համարյա ողջ տարածքն ամուր կապված է մեծ գիտնականի անվանը: Նա պարզապես ցնցեց մեր մոլորակը իր հայտնագործությամբ, որը հիմնականում կատարեց հենց Հարավային Ամերիկայի ափամերձ խուլ անկյուններում: Նա երկարատեւ հետազոտություններ է անցկացրել նաեւ Բիգլ ջրանցքից քիչ ավելի հյուսիս ընկած շրջանում: Մագելլանի նեղուցի հյուսիսային եւ հարավային ափեզերքին: Այնպես որ, այս վայրերը սերտորեն կապված են մարդկության միանգամից երկու տիտանների անվան հետ. Ֆերնան Մագելլանի եւ Չարլզ Դարվինի: Հիշում եմ, երեք շաբաթ առաջ, մոլորակի ամենահարավային քաղաքում ես ուշադրություն դարձրի մի այդպիսի հաճելի հարեւանության վրա, երկու կից փողոցների անվանումները նշող ցուցանակի վրա կարդալով Մագելլանի եւ Դարվինի անունները: Այնպես որ, Հորնից հետո նաեւ Մագելլանի նեղուցն անցնելու ձգտումը պայմանավորված էր ոչ միայն սպորտային հետաքրքրությամբ, այլեւ մարդկության պատմության դրվագներին հպվելու ցանկությամբ:

Անձնակազմը ոգեւորությամբ ընդունեց գաղափարը, այսպես ասենք՝ վերջնականապես բաց օվկիանոս դուրս գալու մասին հենց այնտեղից, որտեղ Մագելլանը արտաբերեց իր պատմական բառակապակցությունը՝ «Խաղաղ օվկիանոս»: Ի տարբերություն ռուսերենի, հայերենում այն ճշգրիտ թարգմանությունն է «պացիֆիկ» (խաղաղ) բառի, որը հնչել էր Ֆերնան Մագելլանի շուրթերից:

Այդ գաղափարի իրագործման ողջ բարդությունն ամենից լավ հասկանում էին նավապետ Սամվել Կարապետյանը եւ շտուրման Հայկ Բադալյանը, որին, ի հավելումն իր բոլոր մասնագիտությունների, տվել ենք նաեւ «Արմենիա»-ի գլխավոր քարտեզագետի կոչումը: Խոսքն այն մասին է, որ Դրեյքի նեղուցից Մագելլանի նեղուց պետք է մտնել այնպես, որ գոնե դրա երկարության մեկ երրորդն անցնենք: Դա մոտ երկու հարյուր կիլոմետր է: Հենց այնտեղ են ճանապարհի ամենաբարդ հատվածները: Եվ հենց այնտեղ էլ, ամերիկյան աշխարհամասի հարավային վերջավորության վրա գտնվող հրաբուխներից մեկի գագաթին, 360 մետր բարձրության վրա 1983 թվականին տեղադրվել է Հռոմի պապ Հովհաննես-Պողոս Երկրորդի օրհնած խաչը: Հենց այնտեղ դեռեւս կարելի է տեսնել փոթորկի ժամանակ խորտակված նավերի բեկորները: Սակայն մեր ճանապարհի գլխավոր խոչընդոտը անհամար քանակությունն է այն ջրանցքների, որոնք բավական հաճախ ու շեղակի շրջանցում են Հրո Երկիր արշիպելագի անհամար կղզիները: Ես, իհարկե, ճանապարհին արված բոլոր գրառումները կանցկացնեմ ապագա գրքիս մեջ: Իսկ առայժմ, կարծում եմ, ճիշտ կլինի վերադառնալ նավապետ-գեներալ Ֆերնան Մագելլանին:

Համաշխարհային պատմությունը գրանցել է բոլոր մեծ եւ շուրջերկրյա նավարկությունները, առանձնապես նրանք, որոնք ողբերգական ավարտ են ունեցել: Ես արդեն նշել եմ, որ ունեմ մոտ երկու հարյուր միայն մեծ եւ հայտնի նավերի ցուցակը, որոնք կործանվել են Հորն հրվանդանի շրջանում: Եվ սակայն առավել հրեշավոր էր պատմության մեջ առաջին շուրջերկրյա նավարկության ողբերգությունը: Եվս մեկ անգամ հիշեցնենք սարսափելի թվերը, որոնք ասես հոսանքահարում են: Հինգ նավերի անձնակազմերի ընդհանուր թվով 264 մարդուց վերադարձան միայն 18-ը: Վերադարձան միայն մեկ նավով: Դա կատարվեց 1519-1522 թվականներին: Դժվար չէ պատկերացնել, թե այն ժամանակներում ինչպիսին էին ոչ միայն պայմանները, այլեւ հնարավորությունները: Եվ դա իմանալով, չես զարմանում, երբ կարդում ես փաստաթուղթը. «Որդերը քրքրել էին պաքսիմատի մնացորդները...սկսվեց լնդախտ... մաշկը ծածկվում էր խոցերով... պոկեցին առագաստափայտերի կաշվե երեսվածքները, մի քանի օր թրջեցին ծովում, ապա եփեցին եւ կերան»: Բայց միայն դա չէր: Խռովություններ: Դավաճանություններ: Ապստամբություններ: Եղել են պահեր, երբ հինգ նավերից երեքը հայտնվել են խռովարարների ձեռքերում: Եվ այդ ամենը՝ դեռ համարյա մեկնարկին: Համենայն դեպս Մագելլանի նեղուցը հաղթահարեցին ընդամենը երեք նավերով:

Այս ամենը ես վկայակոչում եմ ահա թե ինչու. կարդալով մեծ ծովագնացներին նվիրված ժողովածուների ընդարձակ ակնարկները, հետազոտական հոդվածները, ես եկա այն եզրակացության, որ նույնիսկ Ֆերնանի թշնամիները գիտակցում էին, որ նա ոչ թե աշխարհաշուրջի գերին է՝ որպես այդպիսին, ոչ թե ծառան, այլ տերն է բուն գաղափարի: Չէ՞ որ իր երդվյալ թշնամի Էլ-Կանոյին, որին անձամբ էր շղթայել, նա խոստովանեց, որ մեկ նպատակ ունի. թեկուզ միայնակ վերադառնալ եւ զեկուցել թագավորին ամենագլխավորը՝ ապացուցված է, որ Երկիրը կլոր է: Եվ Էլ-Կանոն դարձավ ամենահավատարիմ բարեկամը:

Ինձ համար Մագելլանը ամենաիսկական փիլիսոփա էր: Նա հիանալի հասկանում էր, որ միայն իրականությունը ճանաչելով, տվյալ դեպքում՝ աշխարհաշուրջի միջոցով, գաղափարը կարող է ներառել նպատակի գիտակցումը: Եվ նա կյանքը զոհեց այդ նպատակի համար: Նրան բոլորովին էլ բնիկները չսպանեցին, ինչպես որ մենք ենք սխալ ընկալել աշխարհագրության դասը: Այնտեղ, Մակտան կղզում նրա մահվանը նախորդել էր գաղափարը: Բնիկներին քրիստոնեական հավատքի բերելու գաղափարը: Եվ դա ստացվեց: Արդեն հասել էր մինչեւ Ֆիլիպինյան կղզիներ: Ամեն ինչ բարեհաջող անցավ Սամար կղզում: Մագելլանը եւ կղզու թագավորը փոխադարձ այցելություններ կատարեցին: Շուտով կղզիաբնակները դարձան քրիստոնյա: Հաջորդը Սեբու կղզին էր: Եվ այնտեղ էլ անձնակազմն ու կղզիաբնակները եղբայրացան: Բայց կատարվեց ամենաանհավանականը: Հենց այդ ժամանակ Սեբուի եւ հարեւան փոքրիկ Մակտան կղզու առաջնորդների միջեւ պատերազմ սկսվեց: Եվ իհարկե, Ֆերնանը չէր կարող երես թեքել իր նոր բարեկամներից: Այն, թե ինչպես դաժան մարտում զոհվեց Մագելլանը, եւ ինչպես տեղի ունեցավ այդ ամենը, արդեն քրեստոմատիա է: Իսկ ես ամենից շատ կարեւորում եմ այն, որ ես ինքս ինձ համար պարզել եմ՝ Մագելլանը գիտակցում էր, որ չի կարող հրաժարվել իր բարոյական սկզբունքներից եւ օգնություն չցուցաբերել, ինչպես ասվեց, նոր, քրիստոնեական հավատքի բերվածներին: Գիտակցում էր եւ այն, որ կարող է ընկնել մարտում: Բայց այնուամենայնիվ հավատում էր, որ իր «Վիկտորիա»-ն, թեկուզ առանց իրեն, կհասնի հայրենիք: Նույնիսկ գիտեր, որ իր փոխարեն դա անելու էր նրա նախկին թշնամին, իսկ այժմ՝ հավատարիմ ընկեր Խուան Սեբաստիան Էլ-Կանոն, որը 1522 թվականին թագավորին ուղղված իր զեկույցում ընդգծեց պատմական նախադասությունը. «Մենք գործով ապացուցեցինք, որ Երկիրը գունդ է»:

Դե ուրեմն, ինչպե՞ս կարող էինք անտեսել Մագելլանի նեղուցը: Ճիշտ է, ոչ առանց դժվարությունների ու հոգսերի, բայց «Արմենիա»-ն անցավ նեղուցի այդ հատվածը եւ դուրս եկավ այնտեղ, որտեղ առաջին անգամ արտասանվել են այդ երկու բառերը՝ Խաղաղ օվկիանոս:

ԶՈՐԻ ԲԱԼԱՅԱՆ
«Արմենիա» առագաստանավ,
Խաղաղ օվկիանոս

## ԱՄՓՈՓԵԼՈՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

# Հարավային Սուդանը քվեարկել է անկախացման օգտին

Սուդանի հարավային շրջանների բնակչությունը մեկ շաբաթ տեւած հանրաքվեի ընթացքում քվեարկել է անկախացման օգտին: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:

Հանրաքվեի արդյունքները պաշտոնապես համարվում են նախնական, քանի որ հաշվարկված է քվեների միայն 98,7 տոկոսը: Քվեարկության մասնակիցների 98,8 տոկոսը անկախության կողմնակից է: Այնպես որ էական փոփոխություն չի կարող լինել: Մոտ ժամանակներս քվեաթերթիկները մեկշաբաթյա ստուգման կուղարկվեն Սուդանի մայրաքաղաք Խարթում:

Սպասվում է, որ Հարավային Սուդանը իրեն պաշտոնապես անկախ կհայտարարի հուլիսի 9-ին: Երկրի հյուսիսի եւ հարավի իշխանությունները մոտ ժամանակներս պետք է որոշեն սահմանագծման եւ նավթի պաշարների բաժանման հարցերը: Նավթի մեծ մասը գտնվում է հարավում, բայց մինչեւ օրս տեղափոխվում էր հյուսիսային շրջաններ, որոնք էլ ստանում էին հիմնական եկամուտը: Առայժմ հայտնի չէ, թե ում բաժին կընկնի սահմանային Աբեյ վիճելի շրջանը:

Սուդանում մոտ 20 տարի քաղաքացիական պատերազմ էր: 2005-ին կառավարությունը եւ հարավցի անջատականները կնքեցին հաշտության համաձայնագիր, որով նախատեսվում էր անցկացնել անկախության հանրաքվե: Վերլուծաբանները կարծում են, որ Սուդանի նախագահ Օմար ալ Բաշիրը ստիպված կատարում է համաձայնագիրը, որպեսզի բարի համբավ ձեռք բերի Արեւմուտքում: Նախագահի զիջման մյուս պատճառն այն է, որ նա անկարող է զսպել անջատականներին:

Բացի դրանից՝ Օմար ալ Բաշիրը հայտարարել է, որ հարավի անջատումից հետո իսլամի շարիաթը դառնալու է հյուսիսի օրենսդրության հիմքը, իսկ արաբերենը պետք է լինի միակ պետական լեզուն: Ներկայումս Սուդանում, շարիաթից բացի, ընդունվում է այսպես կոչված «ժողովրդի ընդհանուր համաձայնությունը», իսկ արաբերենից բացի՝ պետական կարգավիճակ ունեն անգլերենը եւ տեղական ժողովուրդների լեզուները:

# Իրանը ռազմանավեր կուղարկի Միջերկրական եւ Կարմիր ծովեր

Իրանը մտադիր է մոտ ժամանակներս ռազմանավերի տորմիղ ուղարկել Միջերկրական եւ Կարմիր ծովեր: Նավերից մեկը տեղական արտադրության «Ջամարան» էսկադրային ականակիրն է: Այդ մասին հաղորդում է իրանական Fars գործակալությունը:

Իրանական նավատորմիղը կմտնի Կարմիր ծով, ապա Սուեզի ջրանցքով կանցնի Միջերկրական ծով: Նման հայտարարություն է արել Իրանի ծովուժի հրամանատար, դերծովակալ Ղոլամ Ռզա Խադեմ Բիքամը: Նա նշել է, որ ռազմանավերը շարժվելու են «շատ լավ երթուղով»:

Հաղորդվում է, որ մեկ տարի տեւողությամբ առաքելության ընթացքում իրանական ռազմանավերը հետախուզական տվյալներ են հավաքելու տարածաշրջանի իրադրության վերաբերյալ:

# Պորտուգալիայի նախագահը վերընտրվել է

Պորտուգալիայում կիրակի օրն անցկացված նախագահական ընտրություններում հաղթել է գործող նախագահ Անիբալ Կավակու Սիլվան: Քվեաթերթիկների 98 տոկոսի մշակման արդյունքները վկայում են, որ արդեն առաջին փուլում Կավակու Սիլվան ստացել է բոլոր քվեների 50 տոկոսից ավելին: Նրա գլխավոր մրցակիցը՝ սոցիալիստ Մանուել Ալեգրեն, ստացել է ընդամենը 19 տոկոս: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

Ընտրություններն աչքի են ընկել բնակչության պասիվությամբ. քվեարկության իրավունքից օգտվել է պորտուգալացիների 47 տոկոսը, նշում է RFI ռադիոկայանը:

Պորտուգալիայում նախագահը կատարում է միայն ներկայացուցչական պարտականություններ. ամբողջ գործադիր իշխանությունը պատկանում է վարչապետին: Սակայն նախագահն իրավունք ունի նշանակելու վաղաժամկետ խորհրդարանական ընտրություններ, ինչպես նաեւ վետո դնել օրինագծերի:

Երկրի օրենքները թույլատրում են նախագահի պաշտոնը զբաղեցնել անընդմեջ միայն երկու անգամ: 1985-ից մինչեւ օրս Պորտուգալիայում իրենց թեկնածությունը երկրորդ անգամ առաջադրած բոլոր նախագահները վերընտրվել են:

# Առաջատար դիրքերում երիտասարդ շախմատիստներն են

Շախմատի Հայաստանի տղամարդկանց առաջնությունում բավական հետաքրքրական պայքար է ծավալվել մրցանակային տեղերի համար: Առայժմ ավելի հաջող են ելույթ ունենում երիտասարդ շախմատիստները: Առաջնության 5-րդ եւ 6-րդ տուրերի հանդիպումներից հետո մրցաշարում եռիշխանություն հաստատվեց: 4-ական միավորով աղյուսակը գլխավորում են Ռոբերտ Հովհաննիսյանը, Հրանտ Մելքումյանն ու Սամվել Տեր-Սահակյանը:

4 տուրից հետո աղյուսակը միանձնյա գլխավորող Հրանտ Մելքումյանի համար հերթական 2 տուրերն անհաջող դասավորվեցին: Նա իր միավորների պաշարն ավելացրեց ընդամենը 0,5-ով, ինչը հնարավորություն տվեց մրցակիցներին հասնելու առաջատարին: 5-րդ տուրում Մելքումյանը սպիտակներով ոչ-ոքի խաղաց Ավետիք Գրիգորյանի հետ, իսկ հաջորդ պարտիայում սեւերով զիջեց Ռոբերտ Հովհաննիսյանին: Դա Մելքումյանի անդրանիկ պարտությունն էր: Առայժմ առանց պարտության են ընթանում Զավեն Անդրեասյանը, Սամվել Տեր-Սահակյանը, Ավետիք Գրիգորյանն ու Տիգրան Պետրոսյանը: Ռոբերտ Հովհաննիսյանը 5-րդ տուրում հաշտություն կնքեց Զավեն Անդրեասյանի հետ:

Հերթական տուրերը հաջող էին Սամվել Տեր-Սահակյանի համար, որը հաղթեց Տիգրան Քոթանջյանին ու ոչ-ոքի խաղաց Ավետիք Գրիգորյանի հետ:

Առաջատարներն իրենց հանգիստ չեն կարող զգալ, քանի որ 5 շախմատիստներ՝ Ավետիք Գրիգորյանը, Զավեն Անդրեասյանը, Տիգրան Պետրոսյանը, Արման Փաշիկյանն ու Արա Մինասյանն ընդամենը կես միավոր են զիջում նրանց: Անդրեասյանը 6-րդ տուրում հաշտություն կնքեց Փաշիկյանի հետ: Զավենն առայժմ խաղաղասիրաբար է տրամադրված: Նա անցկացրած պարտիաներից 5-ում հաշտություն է կնքել:


ՖՈՏՈԼՈՒՐ

Անսպասելիորեն թույլ են հանդես գալիս մեր ամենափորձառու գրոսմայստերներից երկուսը՝ Արտաշես Մինասյանն ու Աշոտ Անաստասյանը: Մինասյանի եւ Անաստասյանի մրցավեճը 5-րդ տուրում շատ կարճ տեւեց: Կատարելով ընդամենը 11 քայլ, մրցակիցները բաժանվեցին կեսական միավոր վաստակած: 6-րդ տուրում Մինասյանին վերջապես հաջողվեց ճաշակել հաղթանակի քաղցրությունը՝ պարտության մատնելով Դավիթ Պետրոսյանին: Այդ հաղթանակի շնորհիվ Մինասյանը վաստակեց 2,5 միավոր: Իսկ ահա Անաստասյանը կրկին անհաջողության մատնվեց՝ զիջելով մրցաշարի բացահայտ հետնապահ Տիգրան Քոթանջյանին: Վերջինս 5 անընդմեջ պարտություններից հետո վերջապես առաջին միավորը վաստակեց: 1,5-ական միավորով 11-12-րդ տեղերն են բաժանում Դավիթ Պետրոսյանն ու Աշոտ Անաստասյանը:

Երեկ առաջնության մասնակիցներին հանգստանալու միակ հնարավորությունն էր ընձեռվել: Այսօր կայանալիք 7-րդ տուրի հանդիպումներից առավել հետաքրքրական են Տեր-Սահակյան-Հովհաննիսյան, Մելքումյան-Փաշիկյան, Անդրեասյան-Տ. Պետրոսյան պարտիաները: Մրցաշարի ավարտին մնացել է 5 տուր:

# «Շախտյորը» դիմացավ «Ինտերի» գրոհներին

Սանկտ Պետերբուրգում ավարտված ֆուտբոլի «Համագործակցության գավաթի» մրցաշարի հաղթող դարձավ Բաքվի «Ինտերը»: Եզրափակիչում «Ինտերն» առավելության հասավ Բելառուսի «Շախտյորի» նկատմամբ: «Ինտերը», որ նախորդ 5 հանդիպումներում մրցակիցների դարպասները 16 անպատասխան գնդակ էր խփել, վճռորոշ խաղում չկարողացավ գոլ խփել: Խաղի հիմնական եւ լրացուցիչ ժամանակում այդպես էլ դարպասները մնացին անառիկ: Մրցանակի բախտը վճռեցին հետխաղյա 11 մ հարվածները: «Ինտերը» հաղթեց 6-5 հաշվով եւ առաջին անգամ դարձավ «Համագործակցության գավաթի» մրցաշարի հաղթող: Նշենք, որ ադրբեջանական թիմերը 3-րդ անգամ ուժեղագույնը ճանաչվեցին «Համագործակցության գավաթի» մրցաշարերում: 2006-ին հաղթող էր ճանաչվել Բաքվի «Նեւթչին», երկու տարի անց ուժեղագույնի տիտղոսը նվաճել էր «Խազար-Լենքորանը»:



«Համագործակցության գավաթի» խաղարկություններում սկզբնական շրջանում հիմնական մրցակցությունն ընթանում էր Մոսկվայի «Սպարտակի» եւ Կիեւի «Դինամոյի» միջեւ: Այս թիմերը 4 անգամ են հանդիպել եզրափակիչում: 3 անգամ (1997, 1998, 2002-ին) հաջողությունն ուղեկցել է կիեւցիներին, 1999-ին հաղթող է ճանաչվել «Սպարտակը»: Մոսկովյան ակումբն առավել հաճախակի՝ 6 անգամ նվաճել է «Համագործակցության գավաթը»: 4 անգամ ուժեղագույնի կոչմանն է արժանացել Կիեւի «Դինամոն»:

# «Բանանցը» զիջեց «Մետալուրգին»

Ինչպես տեղեկացրել ենք, «Բանանցը» Թուրքիայի Բելեք քաղաքում համատեղ ուսումնամարզական հավաք է անցկացնում Դոնեցկի «Մետալուրգի» հետ: Հենց այս թիմի հետ էլ «Բանանցն» ստուգողական առաջին հանդիպումն անցկացրեց: Ուկրաինական ակումբը 3 անպատասխան գնդակ խփեց «Բանանցի» դարպասը:

«Բանանցի» կազմում այդ հանդիպմանը մասնակցել են թիմում փորձաշրջան անցնող Դրագուտինովիչը, Անատիչը եւ Չելեբաձեն: «Մետալուրգի» կազմում 2-րդ խաղակեսին մասնակցել են Արտակ Դաշյանն ու Արարատ Առաքելյանը:

# Զրկվեցին ուղեգրից

Իսլանդիայում ընթացող ֆուտզալի Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարի 2 հանդիպումներից հետո Հայաստանի հավաքականն արդեն կորցրել է խաղարկվող միակ ուղեգրին տիրելու հնարավորությունը:

Մեր ընտրանին մեկնարկային խաղում ոչ-ոքի (2-2) ավարտեց հանդիպումը Հունաստանի հավաքականի հետ: 5-րդ րոպեին Արմեն Դանիելյանը բացեց հաշիվը, սակայն մեկ րոպե անց Յանիս Դելապորտասը վերականգնեց հավասարակշռությունը: 23-րդ րոպեին հույները Սոկրատիս Մուրդուկուտասի հարվածով հաշվի մեջ առաջ անցան: Մեր թիմին պարտությունից փրկեց Խորեն Զարգարյանը՝ 27-րդ րոպեին աչքի ընկնելով դիպուկությամբ:

Հաջորդ խաղում Հայաստանի հավաքականը 1-6 հաշվով զիջեց իսլանդացիներին: Թեեւ 11-րդ րոպեին Խորեն Զարգարյանի գոլի շնորհիվ մեր հավաքականը բացեց հաշիվը, սակայն հետագայում դաշտի տերերը 6 անգամ գրավեցին մրցակցի դարպասը:

Այսպիսով, 2 խաղից հետո ՀՀ հավաքականը 1 միավորով եզրափակում է ընտրական B խմբի աղյուսակը: Առաջատարը Լատվիայի ընտրանին է, որը 2 հանդիպումներում էլ հաղթել է Իսլանդիայի (5-4) եւ Հունաստանի (4-0) հավաքականներին:

# Խաղակոշիկները կցուցադրվեն թանգարանում

**Ֆուտբոլի Ասիայի գավաթի խաղարկությունում Սիրիայի հավաքականի դարպասը ճապոնացի Կեյսուկա Հոնդայի խփած գնդակը հոբելյանական՝ 1000-րդ գոլն էր Ճապոնիայի ընտրանու մրցախաղերում: Պատմական այդ իրադարձությունը մաս կկազմի Ճապոնիայի ֆուտբոլի ֆեդերացիայի 90-ամյա հոբելյանին նվիրված տոնակատարությանը:**

**Ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Ջունջի Օգուրան հայտարարել է, որ Հոնդայի խաղակոշիկները կդրվեն ճապոնական ֆուտբոլին նվիրված թանգարանում:**

# ԿՈՆԿԱԿԱՖ-ը հավակնում է 4 ուղեգրի

**ԿՈՆԿԱԿԱՖ-ի նախագահ Ջեկ Ուորները հայտարարել է, որ կոնֆեդերացիան արժանի է աշխարհի առաջնությունների եզրափակիչ փուլում 4 հավաքական ներկայացնել: Մինչեւ այժմ ընտրական մրցաշարերի արդյունքում կոնֆեդերացիան 3 ուղեգիր էր ստանում, իսկ 4-րդի համար հարկ էր լինում անցումային խաղ անցկացնել:**

ՎԵՅՔ ԱՆ ԶԵԵ

# Արոնյանն ու Սարգսյանն առաջատար եռյակում են

**Վեյք Ան Զեեի շախմատի մրցաշարում հաջող մրցելույթներն են շարունակում Լեւոն Արոնյանն ու Գաբրիել Սարգսյանը՝ տեղ զբաղեցնելով առաջատար եռյակում:**

**Ուժեղագույնների մրցաշարի 7-րդ տուրում մեծ հետաքրքրություն էր ներկայացնում Լեւոն Արոնյանի մրցավեճը ռուս գրոսմայստեր Ալեքսանդր Գրիշչուկի հետ: Ինչպես հայտնի է, գարնանը Կազանում կայանալիք հավակնորդների մրցաշարի քառորդ եզրափակիչում Արոնյանի մրցակիցը հենց Գրիշչուկն է: Հայ շախմատիստն իրեն հիանալի դրսեւորեց եւ սեւ խաղաքարերով հաղթանակ տոնեց: 8-րդ տուրում Արոնյանը կրկին սեւերով ոչ-ոքի խաղաց աշխարհի չեմպիոն Վիշվանաթան Անանդի հետ: 8 տուրից հետո Արոնյանը 5 միավորով Վլադիմիր Կրամնիկի, Մագնուս Կառլսենի եւ Մաքսիմ Վաշիե-Լագրավի հետ բաժանում է 3-6-րդ տեղերը:**

**Աղյուսակը 5,5-ական միավորով գլխավորում են ճապոնացի Հիկարու Նակամուրան եւ հնդիկ Վիշվանաթան Անանդը: Նակամուրան 7-րդ տուրում հաղթեց Յան Սմիթսին, իսկ ահա հաջորդ մրցախաղում կրեց անդրանիկ պարտությունը՝ սեւերով զիջելով Մագնուս Կառլսենին: Վերջինս նախորդ տուրում հաշտություն էր կնքել Անանդի հետ:**

**1,5 միավոր վաստակեց Մաքսիմ Վաշիե-Լագրավը: Նա ոչ-ոքի խաղաց Էրվին Լ' Ամիի հետ եւ պարտության մատնեց Յան Սմիթսին: 4,5 միավորով 7-րդ տեղում է Յան Նեպոմնյաչչին, որը միավորները բաժանեց Ռուսլան Պոնոմարյովի ու Էրվին Լ' Ամիի հետ պարտիաներում: 4-ական միավոր ունեն Ռուսլան Պոնոմարյովն ու Անիշ Գիրին: 2-ական միավորով աղյուսակը եզրափակում են Յան Սմիթսն ու Ալեքսանդր Գրիշչուկը:**

**B խմբի մրցաշարի մասնակից Գաբրիել Սարգսյանը 8 տուրից հետո 5 միավորով Զախար Եֆիմենկոյի եւ Ռադոսլավ Վոյտաշեկի հետ բաժանում է 3-5-րդ տեղերը: 7-րդ տուրում Գաբրիելը երկարատեւ պայքարից հետո հաղթեց Ֆրիսո Նիյբոերին: 8-րդ տուրում հայ շախմատիստի մրցակիցն առաջատարներից մեկն էր՝ անգլիացի գրոսմայստեր Լյուկ Մակշեյնը: Պարտիան ավարտվեց ոչ-ոքի: Սարգսյանը նպաստեց Ուեսլի Սոյի առաջատարի դիրքում ամրապնդվելուն: Վերջինս 4 անընդմեջ հաղթանակների շնորհիվ 6 միավորով միանձնյա գլխավորեց աղյուսակը: Սոն վերջին 2 հաղթանակները տոնեց Դավիթ Նավարայի եւ Վուտեր Սպուլմանի նկատմամբ: Առաջատարին կես միավոր է զիջում Մակշեյնը:**

**Երեկ մրցաշարում հանգստյան օր էր: Այսօր շախմատիստները կանցկացնեն 9-րդ տուրի մրցախաղերը: Լեւոն Արոնյանը սպիտակներով խաղալու է Իսպանիան ներկայացնող Ալեքսեյ Շիրովի հետ, որը 2,5 միավորով 12-րդ տեղում է: Գաբրիելի մրցակիցը կլինի 5 միավոր ունեցող լեհ գրոսմայստեր Ռադոսլավ Վոյտաշեկը: Մրցաշարի ավարտին մնացել է 5 տուր:**

# Հոլիֆիլդ-Վիլյամս մենամարտն անավարտ մնաց




**Գերծանրքաշային ամերիկացի բռնցքամարտիկ Էվանդեր Հոլիֆիլդի եւ Շերման Վիլյամսի մենամարտն անավարտ մնաց: 2-րդ ռաունդի ավարտին մրցակիցները գլուխներով բախվեցին, եւ Հոլիֆիլդը վնասվածք ստացավ, որի պատճառով չկարողացավ շարունակել մենամարտը: Մրցակարգի համաձայն, մենամարտը հայտարարվեց չկայացած:**

**«Շատ հիասթափված եմ: Վիլյամսը մենամարտում էր այնպես, ինչպես հարկն է: Նա գիտակցում էր, որ հարկավոր է գլուխը ներքեւ պահել, քանի որ ինձանից ցածրահասակ էր: Բռնցքամարտում նման վնասվածքներ միշտ էլ հանդիպում են: Այնպես որ կյանքը շարունակվում է», նշել է Հոլիֆիլդը:**

**Շերման Վիլյամսը դժգոհ էր մենամարտի նման արդյունքից: Նրա կարծիքով Հոլիֆիլդի վնասվածքը ոչ թե գլխի, այլ բռունցքի հարվածից էր: Ուստի նրա կարծիքով, իրեն պետք է հաղթանակ շնորհեին տեխնիկական նոկաուտով: Վիլյամսը հարգանքով է խոսել Հոլիֆիլդի մասին, նշելով, որ հիացած է վերջինիս երկարակեցությամբ: Վիլյամսը նաեւ նշել է, որ հարկ եղած դեպքում ինքը պատրաստ է կրկին մենամարտել Հոլիֆիլդի հետ:**

# Հովհաննես Գրիգորյանը կխաղա «Շիրակում»

**Ինչպես տեղեկացանք Գյումրիի «Շիրակի» մամուլի քարտուղարությունից, թիմի հետ մեկամյա պայմանագիր է կնքել պաշտպան Հովհաննես Գրիգորյանը: Նա թիմի կազմում ներկայումս մասնակցում է ծաղկաձորյան հավաքին: Հովհաննես Գրիգորյանը «Բանանցի» սան է, բարձրագույն խմբում թիմի հիմնական կազմում հանդես է եկել 2006-2009-ին: Անցյալ տարի Գրիգորյանը հանդես եկավ Կապանի «Գանձասարում»:**

# Արտակ Ալեքսանյանը վերադարձել է «Փյունիկ»

**Հայաստանի երիտասարդական հավաքականի կիսապաշտպան Արտակ Ալեքսանյանը մեկամյա ընդմիջումից հետո վերադարձել է «Փյունիկ»: Նա շուտով կմիանա թիմին, որը Սոչիում ուսումնամարզական հավաք է անցկացնում:**

**Ալեքսանյանը Մոսկվայի «Սպարտակի» մարզադպրոցի սան է: Նա 2009-ին հանդես եկավ «Փյունիկում» եւ Հայաստանի երիտասարդական հավաքականում: Անցյալ տարի Արտակն իր ուժերը փորձեց Եկատերինբուրգի «Ուրալում»: Հունվարի սկզբին նա փորձաշրջան անցավ Սարանսկի «Մորդովիայում»:**

**«Փյունիկը» Սոչիում այսօր կմրցի Կուրսկի «Ավանգարդի», իսկ 29-ին՝ Սոչիի «Ժեմչուժինա-Սոչիի» հետ:**

# «Իմպուլսն» ավարտեց հավաքը

**Սոչիում ուսումնամարզական հավաքն ավարտելուց հետո Դիլիջանի «Իմպուլսը» վերջին ստուգողական հանդիպումն անցկացրեց: Մրցակիցը «Ռոստովն» էր, որին դիլիջանցիները զիջեցին 1-2 հաշվով: «Իմպուլսից» միակ գոլը տուգանային հարվածով խփել է Վահագն Այվազյանը:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Օրվա հետքերով

## Տեղափոխվում են «եվրոպական ճակատ» եւ սայթաքում

Լիտվայի Սեյմի մի խումբ պատգամավորներ «Լեռնային Ղարաբաղում հակամարտության խաղաղ կարգավորման մասին» բանաձեւ են մշակում: Այդ մասին Trend գործակալության թղթակցին ասել է Սեյմի խոսնակ **Իրենե Դեգուտիենեն**: Ըստ խոսնակի, բանաձեւն «առաջարկում է ձեռնպահ մնալ ուժի, այլ ոչ թե միջազգային իրավունքի օգնությամբ ձեռք բերված ստատուս քվոյի մշտական պահպանման ցանկությունից»: Լիտվան ընթացիկ տարում ստանձնել է ԵԱՀԿ նախագահությունը, եւ Իրենե Դեգուտիենեն կարծում է, որ բանաձեւի ճակատագիրը կախված կլինի այն բանից, թե որքանով իր երկիրն ականատես կլինի «այդ հակամարտության կարգավորման ուղղությամբ միջազգային հանրության իրական ջանքերին»:

Իհարկե, բավական արտառոց է, որ ԵԱՀԿ նախագահությունն ստանձնած երկրի խորհրդարանի խոսնակն անկնկալիքներ ունի ոչ թե այն կառույցից, որն անմիջականորեն զբաղվում է ղարաբաղյան կարգավորմամբ, այլ՝ առհասարակ «միջազգային հանրությունից»: Լիտվան Եվրամիության անդամ է, եւ Իրենե Դեգուտիենեն նաեւ ասել է, որ ենթադրաբար ընդունվելիք բանաձեւում խոսվում է նաեւ Եվրամիության կողմից «Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի որոշմանը ավելի ծանրակշիռ մասնակցության մասին»: Իհարկե, շատ հնարավոր է, որ ադրբեջանական լրատվամիջոցը, մեղմ ասած, Լիտվայի խորհրդարանի խոսնակի մտքերը վերաշարադրելիս այնքան էլ բարեխիղճ չի գտնվել:

Այդուհանդերձ, ի՞նչ է նշանակում «ոչ թե միջազգային իրավունքի, այլ ուժի օգնությամբ ձեռք բերված ստատուս քվո»: Դա այն էր, որ Խորհրդային Միությունը հաստատել էր մերձբալթյան երկրներում, այդ թվում եւ՝ Լիտվայում, եւ որի հետ միջազգային հանրությունը չէր հաշտվում: Ի վերջո, սակայն, ԽՍՀՄ-ը ստիպված էր բացել «սրբություն սրբոցը»՝ իր պետական արխիվները, հատուկ հանձնաժողովին տրամադրել Երկրորդ համաշխարհային պատերազմին նախորդած դիվանագիտական փաստաթղթերը, ներառյալ՝ Մոլոտով-Ռիբենտրոպ պակտն ու կից գաղտնի արձանագրությունը, որով Արեւելյան Եվրոպան ԽՍՀՄ-ի եւ Գերմանիայի միջեւ բաժանվել էր «ազդեցության գոտիների», եւ ժողպատգամավորների համագումարի որոշմամբ դրանք ճանաչել «միջազգային իրավունքին հակասող», ինչը եւ մերձբալթյան երկրների համար անկախություն ստանալու ճանապարհ հարթեց:

Անշուշտ, դրանով կենտրոնական իշխանությունների սադրանքները չվերջակետվեցին: Բայց եթե մի պահ պատկերացնենք, որ Միխայիլ Գորբաչովը մինչեւ վերջ էր համառում, դրանից մի՞թե Մերձբալթիկայի խորհրդային օկուպացիան օրինականանալու էր: Երբեք: Իսկ եթե ԽՍՀՄ-ը, հանուն «տարածքային ամբողջականության պահպանման», Մերձբալթիկայի դեմ ուժ կիրառե՞ր: Դա դիտվելու էր օրինակա՞ն: Իհարկե՝ ոչ: Փաստարկել, որ Լիտվան, ինչպես ԽՍՀՄ միութենական հանրապետություններից յուրաքանչյուրը, ուներ ինքնորոշման իրավունք, իսկ Լեռնային Ղարաբաղը՝ ոչ, ճիշտ չէ ո՛չ իրավական, ո՛չ քաղաքական, ո՛չ բարոյական առումներով: Թեկուզ եւ միայն այն պատճառով, որ Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանի «կազմում է թողնվել» ուժի եւ ուժի սպառնալիքի կիրառմամբ: Եվ ամբողջ խնդիրն այն է, թե արդյոք Եվրոպան հիմքեր ունի՞ անցյալ դարասկզբին կատարվածը համարելու «միջազգային իրավունքին համապատասխանող»:

Հարցն ամենեւին էլ հռետորական չէ, քանի որ տպավորությունն այն է, որ Եվրամիության անդամ որոշ երկրներ, որ միայն վերջերս են դուրս եկել «կոմունիստական շինելից», սեփական հավակնությունները փորձում են բավարարել այլոց հաշվին: Ինչ-որ տեղ, թերեւս, դա բացատրելի է Ռուսաստանի հանդեպ նրանց կանխատրամադրվածությամբ, բայց ԼՂ հարցն այն դեպքը չէ, ինչպես նրանց է պատկերվում:

Ակնհայտ ասած, NABUCCO-ի միջոցով ինչ-որ «էներգետիկ անվտանգության հարց» լուծելու այդ ամբողջ նպատակամղվածությունը թվում է զուտ քաղաքական ծրագիր, որը, սակայն, Եվրամիության համար կարող է դառնալ ավելի վտանգավոր: Այս կերպ եվրոպական արժեհամակարգը ենթարկվում է լուրջ փորձության, որովհետեւ «հանգուցայինի» համարում ունեցող Ադրբեջանը բոլորովին էլ մտադիր չէ զուտ կոմերցիոն՝ «վճարիր եւ գնիր» սկզբունքով Եվրոպա արտահանել իր բնական գազը:

«Յուրաքանչյուր գործարք ունի նաեւ քաղաքական բաղադրիչ», անկեղծորեն խոստովանում է քաղաքագետ, այժմ նաեւ խորհրդարանի իշխանամետ պատգամավոր **Ռասիմ Մուսաբեկովը** եւ ավելացնում. «Եթե Եվրամիությունն ի դեմս Եվրոհանձնաժողովի նախագահի, պատրաստ չէ անգամ խոսքով շեշտադրել Ադրբեջանի տարածքային ամբողջականությանը սատարելը, որը ղարաբաղյան կարգավորման հարցում կարող է դիտվել որպես Հայաստանի նկատմամբ անուղղակի ճնշում, ապա ի՞նչ արժե մեզ սպասել Բրյուսելից գործնականում: Եթե Բրյուսելում կարծում են, որ մեզ հերիք է կոմերցիոն շահը, իսկ քաղաքական ռիսկերի հետ թող Ադրբեջանն ինքնուրույն գլուխ հանի, ապա այնտեղ խիստ սխալվում են»:

Երկու շեշտադրում, երկուսն էլ՝ Եվրոպայի համար առնվազն անցանկալի: Մուսաբեկովը նախ ակնարկում է, որ Եվրամիությունը պետք է «ճնշում գործադրի Հայաստանի նկատմամբ», այնուհետեւ՝ «չեզոքացնի Ադրբեջանին սպառնացող քաղաքական ռիսկերը»: Առաջին մասով, կարծես, ամեն ինչ հասկանալի է. որքան էլ մեծ լինի Ադրբեջանին սիրաշահելու Լիտվայի կամ այս կարգի այլ պետության ցանկությունը, ղարաբաղյան կարգավորման բանակցություններում Եվրոպան ներգրավված է ի դեմս Ֆրանսիայի, որը, մյուս երկու համանախագահ երկրների հետ, մշակել է կարգավորման հայեցակարգն ու շարունակելու է ջանքերը՝ բանակցող կողմերի միջեւ դեռեւս տարաձայնությունների առարկա հանդիսացող պահերը հարթելու ուղղությամբ: Սա պարզ է նույնիսկ Մուսաբեկովի համար:

Ավելի արտառոցը երկրորդ «պահանջն» է: Ինչպես ռուսներն են ասում, «ոզնու համար էլ պարզ է», թե ինչու է Ադրբեջանը «Եվրոպայի համար դարձել հանգուցային գործընկեր»: Պարզ է նաեւ, թե ինչ «քաղաքական ռիսկեր» նկատի ունի Մուսաբեկովը: Ակնարկն այն մասին է, որ Եվրամիության հետ «գազային գործարքին» Ռուսաստանը նայում է խանդով: Փաստորեն Ադրբեջանի իշխանությունները Մուսաբեկովի շուրթերով Եվրամիությունից «ապահովության երաշխիքներ են հայցում»:

Բայց ծիծաղելի է, որ Ռուսաստանի հետ խնդիրներ ունեցող Եվրամիությունը պիտի Ռուսաստանից Ադրբեջանի «քաղաքական ռիսկերը չեզոքացնող» երաշխիքներ պահանջի: Իսկ դրա փոխարեն Եվրոպան չի՞ կարող առկա խնդիրներն ուղղակիորեն լուծել Ռուսաստանի հետ՝ ինչպես եւ առաջարկում են Հին աշխարհի առավել պրագմատիկ ուժերը, որոնք խանդավառված չեն NABUCCO-ով: Ի վերջո, Եվրոպայի համար նաեւ քաղաքական առումով նպաստավոր է գործ ունենալ Ռուսաստանի, քան թե Ադրբեջանի հետ: Չէ՞ որ դա նաեւ հեղինակության հարց է:

Այսպիսով, Ադրբեջանի արտաքին քաղաքականության «եվրոպական ուղղությունը», դեռ չձեւավորված, սկսել է տեղապտույտ տալ: Դա միանգամայն կանխատեսելի էր, քանի որ Բաքուն, պարզվում է, անհուսալի արկածախնդիր է ոչ միայն տարածաշրջանային, այլեւ եվրոպական մակարդակում էլ: Իսկ դա այն հարթակն է, որտեղ սայթաքողը երկար ժամանակ խնդիրներ է ունենում:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

### ԲԵՅՐՈՒԹ

## Նիժադ Միքադին կձեւավորի Լիբանանի նոր կառավարությունը

Այս մասին որոշում է կայացրել Լիբանանի նախագահ Միշել Սուլեյմանը: Հիշեցնենք՝ Լիբանանի նախկին վարչապետ Սաադ Հարիրիի կառավարությունը տապալվեց այն բանից հետո, երբ դրանից դուրս եկան «Հզբոլլահ» կազմակերպության նախարարները: Երբ նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրիի որդին վերադարձավ Վաշինգտոնից, կառավարությունը փաստորեն գոյություն չուներ: «Հզբոլլահը» այդ կերպ արտահայտեց իր դժգոհությունը, քանի որ շարժման ներկայացուցիչներից ոմանք մեղադրվում էին Ռաֆիկ Հարիրիի սպանության գործում:

55-ամյա միլիարդատեր բիզնեսմեն Նաժիբ Միքադին, հիշեցնենք, 2005-ին արդեն նշանակված եղել է Լիբանանի վարչապետ, սակայն այդ ժամանակ՝ ինչպես սահմանված է օրենքով, նա չկարողացավ 7 շաբաթվա մեջ ձեւավորել կառավարություն, հետեւաբար զրկվեց վարչապետի պաշտոնից: Միքադին համարվում է «Սիրիային մոտ» անձնավորություն: Երեկ, դուրս գալով նախագահի՝ Բեյրութի նստավայրից, Միքադին նշել է. «Ես ձեռք կմեկնեմ բոլորին, ես կլինեմ ազգային համաձայնության կառավարության ղեկավար»:

Հավելենք նաեւ, որ նախկին վարչապետ Սաադ Հարիրին ավելի վաղ հայտարարել էր, որ, եթե նոր կառավարությունը կազմավորի «Հզբոլլահը», ապա ինքը այդ կառավարության անդամ չի դառնա:

Հ. Ա.

www. azg.am

## ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ «ԱՃՈՒՐԴԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ԱՃՈՒՐԴԻ, ՈՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ Ք.ԵՐԵՎԱՆ, Դ.ԱՆՀԱՂԹԻ 23 ՀԱՍՑԵՈՒՄ**

**ՎԱՃԱՌՎՈՒՄ Է**

Համաձայն ՀՀ կառավարության 2010թ. դեկտեմբերի 16-ի թիվ 1666-Ն որոշման «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի տնօրինության օտարման ենթակա գույքը

| Հ/Հ | Գույքի անվանումը | Թողարկման/ ձեռքբերման տարեթիվը | Գույքի գնահատված արժեքը 25.08.2010թ. դրությամբ /դրամ/ | 28.02.2011թ. աճուրդի | | 16.03.2011թ. աճուրդի | | 01.04.2011թ. աճուրդի | | 18.04.2011թ. աճուրդի | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | մեկնարկային գին /դրամ/ | նախավճար /դրամ/ | մեկնարկային գին /դրամ/ | նախավճար /դրամ/ | մեկնարկային գին /դրամ/ | նախավճար /դրամ/ | մեկնարկային գին /դրամ/ | նախավճար /դրամ/ |
| 1 | Ավտոմեքենա «ԳԱԶ-310290» (պ/հ՝ 039 LL 10) | 1995թ./ 1995թ . | 435000 | 435000 | 21750 | 348000 | 17400 | 278400 | 13920 | 222720 | 11136 |
| 2 | Ավտոմեքենա «ՎԱԶ-21099» (պ/հ՝ 885 LL 21) | 1997թ./ 1997թ. | 390000 | 390000 | 19500 | 312000 | 15600 | 249600 | 12480 | 199680 | 9984 |

| Հ/Հ | Գույքի անվանումը | 04.05.2011թ. աճուրդի | | 20.05.2011թ. աճուրդի | | 06.06.2011թ. աճուրդի | | 22.06.2011թ. աճուրդի | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | մեկնարկային գին /դրամ/ | նախավճար /դրամ/ | մեկնարկային գին /դրամ/ | նախավճար /դրամ/ | մեկնարկային գին /դրամ/ | նախավճար /դրամ/ | մեկնարկային գին /դրամ/ | նախավճար /դրամ/ |
| 1 | Ավտոմեքենա «ԳԱԶ-310290» (պ/հ՝ 039 LL 10) | 178176 | 8909 | 142541 | 7128 | 114033 | 5702 | 91227 | 4562 |
| | Ավտոմեքենա «ՎԱԶ-21099» (պ/հ՝ 885 LL 21) | 159744 | 7988 | 127796 | 6390 | 102237 | 5112 | 81790 | 4090 |

*Համաձայն ՀՀ Արագածոտնի մարզպետարանի 2011թ. հունվարի 18-ի թիվ 04/9.2/101-11 գրության ավտոմեքենաները գտնվում են անսարք վիճակում եւ չեն շահագործվում մարզպետարանի կողմից:

**Համաձայն ՀՀ կառավարության 2010թ. դեկտեմբերի 16-ի թիվ 1666-Ն որոշման՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետն աճուրդի հաղթողի կողմից առաջարկված գնի, ինչպես նաեւ գույքի արժեքի որոշման համար նախատեսված 18000 դրամի (ներառյալ ավելացված արժեքի հարկը) վճարումից հետո մեկամսյա ժամկետում աճուրդի հաղթողի հետ կնքում է առուվաճառքի պայմանագիր՝դրանում նախատեսելով, որ գնորդը պարտավորվում է իր միջոցների հաշվին վճարել գույքի (տրանսպորտային միջոցի) պետական հաշվառման հետ կապված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գումարներն ու տուրքերը:

Աճուրդը կանցկացվի դասական (գնի ավելացման) եղանակով:

Բոլոր աճուրդները սկսվում են ժամը 14:30 -ին:

Աճուրդով չվաճառված գույքի մեկնարկային գինը յուրաքանչյուր հաջորդ աճուրդի ժամանակ նվազեցվում է վերջին աճուրդի գույքի մեկնարկային գնի 20 տոկոսի չափով: Աճուրդը կայանալու դեպքում հաջորդ աճուրդը (աճուրդները) չի (չեն) անցկացվում:

Աճուրդին կարող են մասնակցել ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, ինչպես նաեւ համայնքները, որոնք յուրաքանչյուր աճուրդի համար մինչեւ աճուրդի բացմանը նախորդող աշխատանքային օրը, ժամը 17:00-ն աճուրդային հանձնաժողովին են (հասցեն՝ ք.Երեւան,Դ.Անհաղթի 23 ) ներկայացրել՝

-աճուրդի նախավճարի մուծման անդորրագիրը, որի չափն է՝ յուրաքանչյուր աճուրդի համար յուրաքանչյուր գույքի մեկնարկային գնի 5 տոկոսը, մուտքագրման հաշիվն է «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի թիվ 163518001652 դրամային հաշիվը,

-աճուրդի մասնակցության վճարի անդորրագիրը, որի չափն է 15000 դրամ (վճարվում է «Աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի դրամարկղ), գույքի գնի մեջ չի ներառվում եւ անկախ աճուրդի արդյունքներից չի վերադարձվում,

-անձնագիրը, իսկ իրավաբանական անձինք հիմնադիր փաստաթղթերի պատճենները եւ լիազորությունները հաստատող փաստաթղթերը:

Աճուրդին չեն կարող մասնակցել այն անձինք, որոնք վաճառվող լոտի նկատմամբ չեն կարող ունենալ սեփականության իրավունք:

Աճուրդի մասնակիցների անձնագրի առկայությունը պարտադիր է: Աճուրդին կարող են ներկա գտնվել դիտորդներ՝ աճուրդի մասնակից չհամարվող այն անձինք, ովքեր վճարել են մուտքի վճար՝ 3000 դրամ:

Դիտորդի տոմսերը վաճառվում են ընդհուպ մինչեւ աճուրդի սկսվելը:

Աճուրդի մասնակիցները վաճառվող լոտին կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրը ընկած ժամանակահատվածում՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 9:00-ից մինչեւ 18:00: Գույքը գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզպետարանի տարածքում, լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել /0232/ 32857 եւ /0232/ 31944 հեռախոսահամարներով:

Նախքան աճուրդի սկսվելը աճուրդային հանձնաժողովը գրանցում է մասնակիցներին եւ յուրաքանչյուր մասնակցին, տրամադրում է քարտ:

Աճուրդը վարում է աճուրդավարը: Աճուրդավարը մասնակիցներին առաջարկում է մեկնարկային գնով գնել լոտը: Ցանկացած մասնակից իրավունք ունի, նախքան աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածը, ներկայացնել նոր գնային հայտ, որը պետք է գերազանցի մասնակիցների կատարած նախորդ գնային հայտը՝ նվազագույնը հավելման (քայլի) չափով:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդի հաղթած մասնակից:

Աճուրդավարի կողմից աճուրդի հաղթող համարված մասնակիցը պարտավոր է՝ հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում, վճարել իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, որը սահմանված ժամկետում (10 օրվա ընթացքում) հետագա վճարումները կատարելու դեպքում նախավճարի հետ միասին հաշվարկվում է վճարման ենթակա գումարի մեջ, իսկ վճարումներից խուսափելու դեպքում չի վերադարձվում եւ տվյալ մասնակիցը զրկվում է աճուրդին մասնակցելու իրավունքից: Եթե աճուրդում հաղթող համարված մասնակիցը սահմանված ժամկետում (հանձնարարագիր ստանալուց 30 րոպեի ընթացքում) վճարում է իր առաջարկած գնի առնվազն 3 տոկոսի չափով գումար, ապա նա ճանաչվում է աճուրդի հաղթող եւ ստորագրում է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը:

Աճուրդում չհաղթող մասնակցին, մուծված նախավճարը վերադարձվում է վերջինիս մեկ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր դիմելուց հետո :

Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու (որը տրամադրվում է դիմումի առկայության դեպքում, մեկ օրվա ընթացքում, պատճենահանման ծախսերը վճարելու պայմանով) եւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ք.Երեւան,Դ.Անհաղթի 23 հասցեով կամ զանգահարել աճուրդային հանձնաժողովին՝ հեռախոս՝ 23-73-00 ինտերնետ՝ URL: //www.privatization.am:

Հնարավոր փոփոխություններն ու լրացումները կիրառվում են այն ձեւով, ինչպես կատարվել է աճուրդի մասին սույն հրապարակային ծանուցումը:

**ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն**

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝24.1.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: